Нетвердость поз, жестов, недостаточное владение мимикой — одним словом, неотработанность манеры держаться нового тифлисского света давали художнику известную свободу в обращении с моделью, возможность изображать ее сообразно собственным представлениям о непринужденности, элегантности, но, главное, подчинять модель художественному "рисунку" портрета. Это была своего рода сценография, где каждый персонаж в какой-то степени "Конструировался" самим художником. Несмотря на отсутствие мизансцененных ситуаций и композиционное однообразие или, лучше сказать, единство овнатанияновских портретов, присутствие "ре-

жиссурного" подхода в них постоянно ощущается. Рука художника негрубо вмешивается в индивидуальность осанки модели, слегка подправляя ее с тем, чтобы придать телу определенное «состояние». Это состояние ассоциируется нами как состояние души. Но «эмоция» не получает развития, она замыкается повторяющимся композиционным мотивом — характерным жестом руки, который обычно подчеркивается ярким пятном в костюме или атрибутом.

Важнейшую роль в овнатаняновском стиле играют романтические элементы.

Одно из наиболее законченных произведений художника, портрет Наталии Теумян (НГА, Ереван, илл.2.), поможет нам показать функционирование этого компонента в конкретном произведении.

Теумян изображена стоящей. Репрезентативная функция портрета, как всегда у Овнатаняна, подчеркнута уже самим ракуром фигуры, ее развитием сверху вниз. Черное платье и украшения Наталии, как это подобает молодым девушкам, весьма скромны. Сфокусированность на черном силуэте, выступающем из светлого дымчатого фона, дает возможность акцентировать наивную утонченность позы, легкость стана молодой девушки, его гибкую грацию и импульсы к движению. Формы уточненного по пропорциям тела, благодаря рельефно выступающему контуру и скромным карнациям, почти угадываются. Это тело действительно может вызвать в памяти восточные эпитеты — "лань", "серна", "джейран" и т.п. Так же легко применить восточные метафоры к чертам лица юной особы. Здесь любовно обыграны цветовые и фактурные параллели. Пурпур губ неоднозначно поддержан гранатовыми отблесками серег и украшения на груди. Живой трепет бледной, играющей блуждающими розовыми рефлексами кожи оттенен холодным тоном жемчужного ожерелья.

На возможность движения статичной головы намекает "зев" воздушного лечака. Небольшой, но довольно важный аксессуар в портрете — белый платок в правой руке молодой женщины. Благодаря легкому контрапосту, затаенный внутри динамический заряд актуализируется и как бы протекает по всей фигуре, концентрируясь, как всегда, в жесте руки. Последний (жест) находит композиционное "разрешение" в конкретном предмете, платке. Белое пятно платка необходимо Овнатаняну и для достижения гармонического

равновесия в колорите. С платком и поясом соотнесен верхний светлый овал (лицо, шея и белая вставка на груди), что призвано отметить на сей раз цветовую вертикаль композиции.

Портрет Наталии Теумян можно назвать наиболее классическим — овнатанияновским каноном. С точки зрения его стиля это произведение совершенство. Наряду с блестящими решенными картическими функциями в нем пленяет тонкость психологической характеристики образа. В портретах художника, вообще, часто удивляют проявления ранней утонченности, психологические нюансы. Тут необходимо учитывать то обстоятельство, что художественные процессы отстающих национальных школ начала XIX века заметно укорялись всеобщей романтической атмосферой времени. Как художник необычайно тонкой организации Овнатаниян был особенно восприимчив к романтическим веяниям.

В образе Наталии художник передает, в первую очередь, собирательную черту своих женских образов — женственность. Мы уже рассмотрели, как она проявляется в физических чертах модели. В психологической характеристике она интерпретируется еще более тонко. На лице Теумян прочитываются конкретные индивидуальные черты: обезоруживающая наивность, безыскусственность, юношеская импульсивность и грусть, которая как будто осмысляется, порой почти угадываясь. Образ наделяется обезоруживающей душевной хрупкостью.

Все эти черты уже вполне созвучны интерпретации личности искусством романтизма. Если к этому прибавить особое изменчивое состояние овнатанияновской героини: задумчивость, сосредоточенность, напряжение, трудно сдерживаемую взволнованность, то, несмотря на отсутствие "сильной" драматической ситуации, портрет раскроется перед нами в откровенно романтическом звучании.

Резюмируя наш анализ художественной системы Овнатанияна, можно сказать следующее. Фокусируя в себе художественные тенденции времени, искусство художника не ограничилось проблематикой переходной эпохи. Мы находим в нем много задач, выходящих из круга чисто стадиальных.

Усилиями армянского живописца тифлисский станковый портрет окончательно сформировался и приобрел жанровую зрелость. Более того, благодаря своей картинной функции, овнатанияновский портрет подготовил развитие остальных станковых жанров.

Что касается индивидуальных задач мастера, то они были, по существу, направлены на то, чтобы пройденный армянским искусством путь плавно и естественно связать с искусством нового времени, а, главное, на то, чтобы в этом продолжении была найдена своя точка отсчета, собственные новые возможности.

Акоп Овнатанян – первый армянский художник Нового времени, который не только пришел к творческому самосознанию, но предложил свой тип движения – первую национальную художественную модель, в которой в качестве равновеликих начал сочетаются два столь органичных армянской культуре метода – восточный и западный. Сегодня можно уже с уверенностью сказать, что именно это условие и могло обеспечить его органичность и жизнедеятельность.

Քնարիկ ԱվետիսՅԱՆ
Հայաստանի ազգային պատկերասրահ

**17-18-րդ դԱՐԵՐԻ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՌԱՆՉԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

17-18-րդ դարերի Հայաստանի սոցիալ-քաղաքական բարդ իրադրության պայմաններում (Հայաստանը բաժանված էր իրանի և Թուրքիայի միջև) Պատմական Հայաստանում և Հայաշատ դադմօջախներում շարունակում են զարգանալ կերպարվեստի ավանդական ճյուղերը, առաջանում նորերը:

Հայ կերպարվեստի պատմության հենքի վրա քննելով Հաստոցային գեղանկարչության առաջացման և զարգացման ընթացքը առաջին հերթին ուշադրություն է դրավում այն, որ վերջինս մեղանում բավականին ուշ է սկզբնավորվել: Կտավի վրա յուղաներկով (Հաղվաղեալ դործածվում է փայտ և մետաղ) նկարված առաջին դործերը թվագրվում են 17-րդ դարի վերջ և 18-ի առաջին քառորդ, որոնց յուրահատկությունները պայմանավորվում են մի շարք հանգամանքներով:

Այդ դործերի գերակշռող մեծամասնությունն ավետարանական պատկերներ են, որոնք հիմնականում արվել են նկեղեցիների համար և ինչ-որ տեղ փոխարինում էին եկեղեցու պատերը զարդարող որմնանկարներին: Տերունական պատկերները մինչև պատոից կախվելը՝ որպես եկեղեցու շնորհական մթնոլորտի խորախորհուրդ առարկա, հայոց եկեղեցու ծիսակարգով օրհնվում ու օծվում են, և ամենակարենրը, ինչպես զրում է Մաղաքիա Օրմանյանը՝ «Եկեղեցուց դուրս բնավ իսկ կիրառության մեջ չեն լինում»¹: Այսինքն, լայն առումով, Հայ իրականության մեջ Հաստոցային գեղանկարչության առաջին դործերի պատմիրատուն ու հովանավորը մնում է Հայոց եկեղեցին, որով և պայմանավորվում է դրանց թեմատիկ սահմանափակումը կրոնական բովանդակության և միջնադարի ձևամտածողության շրջանակներում:

Անշուշտ, այդ ժամանակաշրջանում են սանդծիվել աշխարհիկ պիմանկարչության և թեմատիկ նկարների առաջին օրինակ-

¹ Մ. Օրմանյան, Միստիկան բառապահն, Երևան, 1992, էջ 111:

ները, որոնք գործածության շրջանակով ու տեղային նշանակությամբ առավելապես կապվում են գաղթօջախների (Թիֆլիս, Նոր Ջուղա, Սպահան, Երուսաղեմ և այլն) մշակութային կյանքին և, տվյալ դեպքում, մեր ուսումնասիրության նյութի սահմաններից դուրս են:

Ուշագրավ է այն, որ հաստոցային եկեղեցական գեղանկարչությունը, նոր ժամանակների ծնունդը լինելով, բնականարար, արտացոլում է Հայ կերպարվեստում նկատվող աշխարհըմբանման ու մտածողության նոր միտումները, որոնք կապվում են մշակութային կյանքի բնականոն զարգացման հետ: Աշխարհայացքային այդ նոր փոփոխությունների տեսական հիմնավորումը ձևավորվում է 14-17-րդ դարերի Հայ աստվածաբանական ու փիլիսոփայական հարուստ ժառանգության մեջ: Գրիգոր Տաթևացու, Ստեփանոս Լեհացու, Հովհաննես Մըքուզի, Սիմեոն Զուղայեցու աշխատություններում քննվում են կերպարվեստին վերաբերող բազմապիսի հարցեր, որոնք առնչվում են պատկերի ու նմանության, աստվածայինի ու բնականի փոխհարաբերությանը, գույնի, պլաստիկայի ու գեղեցիկի նորովի ըմբռնումներին:

Ժամանակաշրջանի կյանքի թելադրանքով կերպարվեստում ձևավորվող նոր չափանիշները՝ հետաքրքրությունը իրական կյանքի ու մարդու նկատմամբ, իրենց զգացնել են տալիս «նույնիսկ ամենակրոնական ու երկյուղած ժանրում, ինչպիսին սրբապատկերն է» (ձևակերպումը՝ Հրավարդ Հակոբյանի)²:

17-18-րդ դարերի Հայ հաստոցային դեղանկարչության մեջ գերակշռող մեծամասնությունը Աստվածամոր սրբապատկերներն են, որոնց վերլուծությամբ ներկայացնենք ժամանակաշրջանի Հայ սրբանկարչության մի շարք առանձնահատկությունները:

Առաջին հերթին նկատենք, որ Հայ քրիստոնեական արվեստի ձևավորման շրջանից սկսած Աստվածամոր պատկերները լայն տարածում ունեն մեզանում: Եվ, բնականարար, նոր ժամանակների նկարիչները, Աստվածամոր պատկերները ստեղծելիս հիմնվում են միջնադարյան քանդակագործության, որմնանկարչության և մանրանկարչության մեջ մշակված ու բյուրեղացած

² Հ. Համբորյան, Հայոց տերունամկան սրբապատկերները, Երևան, 2003, էջ 104:

պատկերագրական տեղական ավանդների վրա: Որպես այդ հարուստ ժառանգության կրողը՝ ծանօթ լինելով տարրեր նախօրինակների՝ նրանք հիմնականում հետևում են սրբանկարչության կանոններին՝ հորինվածքի կառուցման, աղղային հոգեկերտվածքով կերպարների ստեղծման, գույնի խորհրդանշական կիրառման գործում: Եվ միաժամանակ, որպես տվյալ դարաշրջանի գեղագիտական չափանիշների կրողը իրենց ստեղծագործության մեջ արտահայտում են նաև գեղարվեստական նոր ընկալումներն ու պատկերացումները: Մշակույթի զարգացման ներքին տրամարանությանը ենթարկվող այս իրողության պայմաններում 17-18-րդ դարերի հայկական սրբապատկերները խմբավորել նկատի ունենալով ստեղծման վայրը և ոճական հատկանիշները³: Դրանք ընդգրկում են Պատմական Հայաստանում և Հայաշատ գաղթօջախներում ստեղծված գործերը (միայն էջմիածնի Մայր տաճարում եղել է 120 գործ, մեծ թվով նկարներ են ունեցել Սպահանի, Նոր Ջուղայի, Երուսաղեմի հայկական եկեղեցիները), որոնց մի մասում շարունակվում են աղղային ավանդները, մի մասի վրա էլ նկատվում է եվրոպական և արևելյան արվեստի աղղեցությունը:

Մինչև առնչությունների նուրբ ու բարդ հարցը քննելը, նկատենք, որ սրբապատկերների գեղարվեստական առանձնահատկությունները, առաջին հերթին, պայմանավորվում են նրանով, որ պրոֆեսիոնալ՝ այն է, որնէ նկարչի մոտ մասնագիտական գիտելքներ ճենոք բերած նկարիչների (օրինակ՝ Հովհաննես Հովհաննեսի կողմէ առաջ բերած նկարիչների աղղային արվեստի աղղեցությունը):

³ Հայր Ն. Ալիխանյան, Յովնաթան Նազար և Նազար Յովնաթանեանք և իրենց բանաստեղծական և նկարչական աշխատութիւնը, Վիլնիս, 1911, Ա. Չոպանյան, Նազար Յովնաթան աշուազը և Յովնաթան Յովնաթանեան նկարիչը, Փարիզ, 1910, Գ. Լեռնյան, Հովհաննեսյան Նազարչները Հայ նկարչության պատմության մեջ, Խորհրդային Արվեստ, թիվ 2, Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Գևորգանիանի թյուն, Երևան, 1974, Հ. Համբորյան, Նշան. աշխ.:

նաթանյանը, Հովհաննես Մրգուղը, Մանաները) կողքին աշխատել են ինքնուև ժողովրդական վարպետներ, և այդ երկու խմբերից յուրաքանչյուրի վարպետության աստիճանը, պատկերազրական կանոնի ու խորհրդաբանության իմացությունը, գեղագիտական չափանիշները, ոճը բավականին տարբերվում են իրարից: Եթե հայ կամ օտարազգի նկարչի մոտ սովորած և «նաղաշի» կամ «պատկերահանի» կոչմանն արժանացած վարպետների ստեղծագործություններին բնորոշ են տեսաբանի ավանդական-դասական հորինվածքը, մարդկային մարմինը բնական տեսքով ու համաչափություններով կառուցելու միտումը, զգացվում է հետաքրքրություն նյութական աշխարհի նկատմամբ, ապա ինքնուև նկարիչների գործերն առանձնանում են տեսաբանի ընկալման անմիջականությամբ ու հարթապատկերային, ինչ-որ տեղ, սիմվոլիկ-պայմանական լուծումով, կատարման պարզությամբ ու մոնումենտալ հնչեղությամբ, գույնի առավել ազատ գործածումով ու դեկորատիվությամբ:

Գեղարվիստական և պատկերագրական այս առանձնահատկությունները պատկերացնելու համար բավական է իրար կողքի դնել նույն ժամանակաշրջանում ստեղծված գահակալ՝ Աստվածամոր երկու հայտնի պատկերները: Դրանցից մեկը Հովն. Հովնաթանյանի (1730, Շոռոթ - 1801/02, Թիֆլիս) «Աստվածամայրը գահի վրա» (ՀԱՊ, ինվ. 793), մյուսը՝ 18-րդ դարի անհայտ նկարչի «Աստվածամայրը Մանկան, Պողոս և Պետրոս առաքյալների հետ» (ՀԱՊ, ինվ. 4198) դործն է: Երկու պատկերների հորինվածքներն իրար նման են և ներկայացնում են հայ միջնադարյան արվեստում տարածված գահակալ Օդիպիտրիա Աստվածամոր բազմաթիգուր այն տարբերակը, ուր նրա երկու կողմերում կանգնած են հայ եկեղեցու պատվելի սրբերը, առաջինի վրա՝ Հովհաննես Ավետարանիչը և Հակոբոս Գլխաղիրը, երկրորդի վրա՝ Պողոսն ու Պետրոսը:

Հովն. Հովնաթանյանի նկարը կառուցված է հեռանկարի սկզբունքով: Առաջին պլանում վանդակավոր հատակի վրա դրված երկաստիճան պատվանդանով ու բարձր միկնակով գահին բազմած Աստվածամոր ձախ թերին Մանուկ Հիսուսն է, երկրորդ պլանում՝ Մարիամի երկու կողմերում դեպի կենտրոն շրջված սրբերի փիգուրներն են, զիսավերեկում՝ աղավնակերպ Ար. Հոգին

և ամսի քուլաների արանքում հրեշտակների գլուխներ, վերսի հատվածում՝ օրհնություն տվող Հայր Աստծո պատկերը։ Հեղինակը՝ պահպանում է տեսարանի ավանդական պատկերազրությունը՝ գործածելով նաև խորհրդանշական մանրամասների ու գունային կառուցվածքի ընդունված ձևերը։ Նուրբ ու գեղեցիկ դիմագծերով, խաղաղ ու ոգեչնչված արտահայտությամբ կերպարները պատկերված են հանդիսավոր կեցվածքներով, ժամանակաշրջանի հայ արվեստում (նկատի ունենք նաև պատկերագանդակները) տարածված ձևով՝ Մանուկ Հիսուսի ձեռքին խաչանիշ տիրագունդ է։ Պահպանելով հագուստների ավանդական՝ հյութեղ կարմիր, կապույտ, տաք շագանակագույն, կանաչ գույները, միաժամանակ դրանց զուգորդումը արծաթավուն ամպերով երկնքի բաց երկնագույնի հետ ձեռք են բերում թարմ հնչեղություն։ Մի առանձնահատկություն, որը հատկանշական գիծ է դառնում ժամանակաշրջանի հայ գեղանկարչության համար։

Փողովրդական ուղղության նկարիչների վերոհիշյալ հորինվածքով ուշագրավ գործերից են նաև «Աստվածամայրը Մանկան, Հովհաննես Մկրտչի և Սր. Ստեփանոսի հետ», «Աստվածամայրը Մանկան, Գրիգոր Լուսավորչի և Սր. Ստեփանոսի հետ» (բոլոր՝ ՀԱՊ, ինվ. 4196, 4197) պատկերները (նկ. 5): Դրանք ներկայացնում են Հորինվածքի հակիրճ տարրերակը, ուր բացակայում են պատկերագրական որոշ զրվագներ՝ Հայր Աստծո, Սր. Հոգու, հրեշտակների պատկերումը և խորհրդանշական մանրամասները՝ Մարիամի կարմիր ոտնամանները, շքեղ հանդերձանքը, ոտքերի տակի պատվանդանը, զարդաքանդակ գահը և այլն։ Կերպարները խիստ արտահայտիչ են ու վեհաշուր, որոնց մարմնավորմանը հեղինակները հասել են ընդհանրացված ձևերի, հատակ, դինամիկ գծանկարի ու մաքուր գույների համադրման միջոցով։ Այս պատկերների համար ընդհանուր է նաև ժողովրդական մտածողությանը բնորոշ մի հատկանիշ։ Դրանցում պահպանվում են պատկերագրական հնամենի ավանդները, որոնք արտահայտվում են տարամասշտաբայնության կիրառումով ու հարթապատկերացին կառուցվածքով։ Առաջին պատկերի վրա Հիսուսի գրկին, համարյա նրա մարմնի չափերին հասնող, խոշոր խաչ է (խորհրդանշում է խաչելությունը), երկրորդի վրա ուշագրություն են դրավում Աստվածամոր՝ նկատկի խոշոր չափերով ձեռքերը (եր-

կու կողմից պահելով գոգին նստած Մանկանը միաժամանակ ցույց է տալիս Փրկիչ որդուն): Բացի այդ նրանց երկու կողքերին կանգնած սրբերի գլուխները նույն բարձրության վրա են պատկերված՝ շրջանցելով Համաչափության կանոնները և կարևորելով տեսարանի իմաստային բովանդակության առանցքը:

Նկարիչները որոշակի վերաբերմունք ունեն Հանդերձանքի ծալազարդման ու մանրամասների պատկերման նկատմամբ: Դրանք դեկորատիվ-զարդային բնույթ ունեն, որն ավելի է շեշտվում վառ ու մաքուր գույների գործածումով: Ուշագրավ է նաև դեմքերի ինքնատիպ մոդելավորումը, ուր արտացոլվում են գեղեցիկի արևելյան-ժողովրդական պատկերացումները: Աստվածամայրը, Հիսուսը և սրբերն ունեն օվալաձև դեմք, որի վրա ընդգծվում են երկար, կամարաձև հոնքանուր եղբեր ունեն 18-րդ դարի երկրորդ կեսի պարսկական՝ Ղաջարների շրջանի, աշխարհիկ որմնանկարչության և դիմանկարչության հետ: Գեղարվեստական մտածողության այս ըմբռնումները և մանրամասների գեկորատիվ ոճավորումն ընդհանուր եղբեր ունեն 18-րդ դարի երկրորդ կեսի պարսկական՝ Ղաջարների շրջանի, աշխարհիկ որմնանկարչության և դիմանկարչության հետ: Գեղարվեստական մտածողության այս ընդհանրությունների հիմքում դարեր շարունակ կողք-կողքի ասլրող Հարեւան ժողովուրդների մշակութային շփումներն են:

Ինչ վերաբերում է եվրոպական երկրների հետ փոխառնչություններին, ապա զրանք առավելապես նկատելի են նոր ժամանակներում: Տնտեսական, առևտրական աշխատեացած կապերը եվրոպական երկրների հետ նպաստում են եվրոպական կենցաղավարության, ինչպես նաև արվեստի դորձերի (հիմնականում ընդօրինակություններ ու փորագրություններ) հայկական միջավայր թափանցելուն: Այն, անշուշտ, որոշակի ազդեցություն է գործում գեղագիտական նոր պահանջների ձևավորման վրա և կերպարվեստում նոր արտահայտչամիջոցների որոնումների գործում: Նկատենք, որ եվրոպական արվեստի հետ առնչությունները տվյալ ժամանակաշրջանի հայկական սրբանկարչության հետ երկու ձևով են գրանորվում: Առաջինն այն է, որ եվրոպական գեղանկարչության, մեզ Համար նոր մոտեցումներն ու ձեռքբերումները ստեղծագործաբար յուրացման ճանապարհով փոխանցվում են Հայ կերպարվեստ՝ Հարստացնելով աղդային գեղարվեստական

ձեւամտածողությունը: Երևույթի լավագույյն արտահայտությունը տեսնում ենք Հովհաննես Մրգուզի, Հակոբ Ջուղայեցու և Հովհաննաթան Հովնաթանյանի արվեստում: Երկրորդը՝ Եվրոպական արվեստի որևէ ստեղծագործության ընդօրինակության հիման վրա ստեղծված սակավաթիվ սրբապատկերներն են, որինակ՝ «Աստվածամայրը քնած Մանկան հետ», «Աստվածամոր յոթ վերքը» և այն: Այս գեղագում էլ ուշադրավ է այն, որ Եվրոպական նախօրինակի հորինվածքից օգտվելով հայ նկարիչները տեսարանի մեկնարանումը ևնթարկում են պատկերագրության տեղական ավանդույթին, ստեղծում ազգային նկարագրով կերպարներ, ավելացնում խորհրդանշական մանրամասներ:

Եվրոպական արվեստի իմացությունը նկարչի կողմից ստեղծագործաբար յուրացնելու և դրա չնորհիվ կերպավորման նոր արտահայտչամիջոցների կիրառումը հայկական սրբանկարչության մեջ քնննենք Հովն. Հովնաթանյանի նկարած Մանուկ Հիսուսում զրկին Աստվածամոր մի քանի սրբապատկերների վերլուծությամբ: Էջմիածնի Վեհարանում գտնվող 1782 թվականի սրբապատկերի վրա անսովոր դիրքով կիսապառկած Հիսուսը վերև բարձրացրած և մոր այտին հպամատ ձեռքի փոքրիկ խաչով օրհնում է և աջը, ողջույնի շարժումով առաջ է պարզել: Սականի ծայրով ծածկված է միայն գոտիկատեղը՝ ցուցադրելով ձեռքերի ու ոտքերի բնական դիրքը: Այս շրջանի մի շարք սրբապատկերների վրա (օրինակ՝ «Աստվածամոր թագադրումը») կիսամերկ են ներկայացվում նաև հրեշտակները: Նկարիչը մեծ վարպետությամբ է վերաբարտադրում հուզականորեն ներդործուն մոր և Մանկան մտերմիկ կապը (Մարիամը քնքշանքով բռնել է սականի ծայրից, կիսախուփ աչքերի հայացքն ուղղել որդուն), Միաձին որդու նկատմամբ խոնարհության, աստվածային սիրո ու երանության այն արտահայտությունը, որով համակված է Աստվածամոր կերպարը: Տեսարանի այս տրամադրությունը շեշտվում է նաև լուսավոր կոլորիտով: Կապտափիրուղ խորքի վրա նուրբ ծալաղարդումով ոսկեգույյն գլխաշորը, ամբողջությամբ ծաղկանկար կապույտ թիկնոցը, կաթնասպակիտակ սավանը, վառ կարմիր և դեղին եղբագծերով լուսապսակները պատկերված են գունային թարմ ու ներդաշնակ համադրման միջոցով:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում իշխաննի Մայր տաճարի իշման սեղանի վրայի մարմարակերտ կառույցի գմբեթի նկարազարդման մեջ ներառված Աստվածամոր պատկերը (նկ. 4), որը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անդամ՝: Ավագ խորանի կողմը նայող նիստի վրա՝ Մանուկ Հիսուսը գրկին Աստվածամոր, կողքի երկուական նիստերին՝ չորս ավելացրանիշների, այնուհետև՝ օրհնություն տվող Հայր Աստծո, Քրիստոսի և աղավնակերպ Սր. Հոգու պատկերներն են՝ տեղափորված ծաղկանկար, կամարաձև վերնամասով շրջանակների մեջ: Բայց Աստվածամոր պատկերից, մյուս տեսարաններում նկարիչը պահպանում է ավանդական սիսեմաները, այն գեղքում, որ Աստվածամոր պատկերագրությունը հայ արվեստում տարածված կերպավորումներից ոչ մեկին նման չէ: Մանկան կողմը խոնարհված Մարիամը պատկերված է Սր. Գրքով, որին ուղղված են նրա և աջ թեփին տեղափորված Հիսուսի Հայացքները: Հայկական սրբանկարչության մեջ մեզ հայտնի միակ օրինակն է, ուր մայր ու մանուկ պատկերվում են նման ձևով՝ ընթերցելիս: Բայց այդ, մոր պարանոցին փարփած Հիսուսի մի ձեռքին տիրապունդ է, մյուսով բռնել և գեղի իրեն է քաշում, ասես չընկնելու համար, Մարիամի գլխաշորի եղբը: Նկարչին հաջողվել է վերարտադրել բնական ու անկաշկանդ շարժումներով մարմինների նյութական որոշակիությունն ու գեղեցկությունը, ազգային գծերով գեմքերի կենսախինդ ու ոգեշնչված արտահայտությունը: Աստվածամոր ու Հիսուսի կերպարների մեկնաբանման այս նոր մոտեցումը, ինչպես նաև Սր. Գրքի գրվագը հուշում են, որ նկարիչը ծանոթ է Խոալական Վերածննդի արվեստի նմանօրինակ գործերին (նկատի

⁴ Ներքեւում փակցված մարմարի վրայի արձանապետաթյունը փաստում է. «Մարմարամերտ չորեքին սիւնքս եւ դմբեթու այս կառուցնալ ի վերայ սրբոյ միամնամէջ սեղանոց Մայր տաճարի ի կաթողիկոսէն Եղիազարու Այնթատինցիւ. ի թիւս 1681-1691»: Այն վերստին նկարագրովվել է Պալկա Կարնեցու որոք 1780-1799 թվականներին, Հովհն. Հովհնաթմանյանի կողմից, ասես Արարատ, Վաղարշապատ, 1901, Հավելված, էջ 329-330 Կառույցը 2001 թվականին Գործադրության ներկայացնելու համար կատարվել անդամությունում է ներկայացնելու ի ներկայացնելու Սրբիությունը կաթողիկոսի հրամանով անդամությունում է ներկայացնելու ի ներկայացնելու Սրբիությունը:

⁵ Արատեսի եկեղեցու (13-րդ դ.) բարավորի պատկերաբանդակի վրա նույնպես Աստվածամոր մի ձեռքին Սր. Գիրք է, որը խորհրդանշական մեկնաբանություն ունի արտահայտելով աստվածային Հայունության գորափարը:

ունենք Յակովո Բելինիի, Ռաֆայելի, Բոտիչելիի ավետարանով Մադոննաների պատկերները) և իր ստացած տպագրությունների հիման վրա ստեղծել է Աստվածամոր այս ուշադրավ պատկերը:

Նոր ժամանակների աշխարհընկալման հետ է կապվում նաև այն, որ Աստվածամոր կերպարում նկարիչները ցանկանում են մարմնավորել տարրեր տրամադրություններ. քնքշանքի ու ակնածանքի, մայրական սիրո ու նվիրումի, թափնական տարրեր ուղղությունների ու ստեղծագործական տարրեր կարողությունների տեր նկարիչների սրբապատկերների համար ընդհանուր է մի կարևոր հատկանիշ: Նրանց բալորի ուշադրության կենտրոնում Աստվածամոր ու Հիսուսի գեմքի պատկերման խնդիրն է: Մորը նմանվող դիմագծերով և դիտողին ուղղված հայացքով Հիսուսի կերպարում մարմնավորվում է սրբապատկերի համար հատկանշական աղոթական վիճակ ապահովող արտահայտությունը: Սրբապատկերներից մեզ նայող Մարիամի ոգեզեն ու ներշնչված գեմքի, խոչոր ու նշանեւ աչքերի, կլորավուն, լիքը այտերի, փոքրիկ շուրջերի ու քթի, նուռը ու երկար մատներով ձեռքերի պատկերման մեջ մարմնավորվում են նաև աղղային հոգեկերտվածքն ու կատարյալի պատկերացումները, որոնց զուգահեռները տեսնում ենք միջնադարյան գրականության հարուստ գանձարանում: Այսպիս, օրինակ՝ Գրիգոր Նարեկացին Աստվածամոր համար գործածում է հետեւյալ համեմատությունները՝ «Յայտէն նոռնենի (այտերը նոռնենի)», «Բերանն երկթերթի, վարդն ի շրթաց կաթէր (բերանն երկթերթի, վարդն էր շրթներից կաթում)», «Մղիքն ծիրանի, մանուշակի Հոյք (դաստակները ծիրանի, մանուշակի փնջեր)»⁶: Իսկ Գրիգոր Տաթևացին այսպիս է նկարագրում Մարիամի արտաքինը. «Հրեշտակատեսիլ Կույսի գեմքի հրաշափառ գեղեցկությունը ճանաչել էր տալիս նրա անթառամ կուսությունը: Գեղեցիկ ու խոշոր աչքեր ուներ, հասակը՝ չափավոր, կերպարանքը՝ վայելուչ: Բազուկներն ու մատները երկար էին, վարսերը խարտյաշ, և լի էր Ար. Հոգու շնորհներով»⁷: Նարեկացու «Մեղեղի ծննդյան» տա-

⁶ Գ. Նարեկացի, Տաղեր, Երևան, 1957, էջ 48-50:

⁷ Գ. Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հասոր, Կ.Պոլիս, 1741, գլուխ ձև:

դում մանրամասն նկարագրվում է նաև Աստվածամոր Հանդերձանքը՝ պատմուճանը կապույտ, ծիրանի, բեհեղյա, որդան-կարմիր, ոսկեշող գույններով է, դռտին՝ արծաթափայլ, ոսկետտուն, ակներով բանված⁸:

17-18-րդ դարերի Աստվածամոր սրբապատկերների գեղարվեստական առանձնահատկությունները դրսեորվում են նաև տեսարանի գունային կառուցվածքում, որին միտված են գեղանկարչական նոր արտահայտչամիջոցների որոնումները։ Տերունական պատկերաշարի տեսարաններին բնորոշ մուգ շագանակագույն պայմանական գուներանգից առավել Աստվածամոր սրբապատկերներում օգտագործում են մաքուր երանդներ՝ իրենց թարմ ու բազմազան զուգորդումներով, ձգտում գույնի միջոցով մարդկային մարմնի նյութական որոշակիության ու բնական ձեվերի վերարտադրմանը։ Երբեմն չխմացության, երբեմն ժամանակի գեղագիտական պահանջների թելադրանքով խախտվում են գույնի խորհրդանշական բովանդակության միջնադարյան պատկերացումները։ Այսպես, օրինակ՝ Մարիամի ու Հիառասի շապիկն ու թիկնոցն ավանդական կարմիր ու կապույտ գույներից բացի պատկերվում են նաև դեղին, կանաչ, մանուշակագույն, ծիրանագույն, վարդագույն, սպիտակ շղարշե կամ գոհարազարդ հավելումով ու ամբողջովին ծաղկանկար, որոնց լուսավոր ու Հնչեղ երանգները նպաստում են կերպարների նորովի մեկնաբանմանը։

Աստվածամոր պատկերների վերոհիշյալ առանձնահատկություններում ամբողջական կերպով արտացոլվում են 17-18-րդ դարերի Հայ կերպարվեստում նկատվող աշխարհընկալման ու մտածողության նոր միտումները և գեղարվեստական նոր արտահայտչամիջոցների լայն կիրառումը, որոնք հիմնարար նշանակություն ունեցան նոր և նորագույն շրջանի աղղային արվեստի զարգացման համար։

⁸ Գ. Ներեկացի, Նույն տեղում։

Զարուհի ՀԱԿՈԲՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՍԿՅՅՐՈՒՆՔՆԵՐԸ
ՀԱԿՈԲ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Հակոբ Հովնաթանյանի արվեստը 19-րդ դարի գեղարվեստական բացառիկ երևույթներից է, որը նոր դարաշրջան է բացում ինչպես Հայկական, այնպես էլ անդրկովկասյան գեղանկարչության մեջ: Հովնաթանյանի արվեստում զարմանալիորեն միահյուսվում են տարրեր ակունքներից եկող գեղանկարչական ավանդույթներն ու նորութիւններն ու նորութիւնները: Ինչպես նշում են արվեստաբանները, Հովնաթանյանի ստեղծագործությունների հիմքում ընկած են մի կողմից՝ ուսուական և եվրոպական դիմանկարային արվեստի, մյուս կողմից՝ միջնադարյան և այսպես կոչված «ղաջարական» գեղանկարչական ավանդույթները¹:

Անշուշտ, վերը նշված աղբյուրները որոշիչ դեր են ունեցել նկարչի գեղարվեստական մտածելակերպի և ոճի ձևավորման համար: Այդ է պատճառը, որ Հովնաթանյանի արվեստի ուսումնասիրությունը տալիս է բազմաթիվ տեսանկյուններ և հարուստ է մասնագիտական խնդիրներով: Մենք ընտրել ենք դրանցից մեկը՝ Հովնաթանյանի արվեստում առկա միջնադարյան գեղանկարչական սկզբունքները:

Անդրադարձը միջնադարյան գեղանկարչությանը պայմանափորված չէր նրանով, որ, ինչպես նշում են ուսումնասիրողները, Հակոբ Հովնաթանյանը հանդիսանում է վերջին միջնադարյան և նոր շրջանը ներկայացնող առաջին վարպետը²: Այլ կերպ ասած, այդ անդրադարձը պայմանագործված չէր այն բանով, որ նկարիչը գեռևս գտնվում էր միջնադարյան գեղանկարչության շրջանակներում: Հակառակը, Հովնաթանյանն արդեն հաղթահարած լինելով դարաշրջանների սահմանագիծը՝ ավելի ազատ մո-

¹ Н. Степанян. Очерки изобразительного искусства Армении. М., 1985, сс. 65-66.

² Ե. Խաչատրյան, Հակոբ Հովնաթանյան, Երևան, 1989, էջ 5:

տեցում է ցուցաբերում միջնադարի նկատմամբ, և վերցնելով այդ դարաշրջանին առավել բնորոշ մի շարք առանձնահատկություններ, զերահիմաստավորում և ձեւավորում է իր ուրույն ոճը: Հովնաթանյանի արվեստի կապը միջնադարի հետ կարեորվում է նաև այն իմաստով, որ միջնադարի միջոցով է նկարիչը հաղորդակից դառնում աղդային գեղանկարչական ավանդույթներին:

Հովնաթանյանը դիմանելու վարպետ է: Մոտ վեց տասնյակի հասնող նրա կտավները կամերային գործեր են, որտեղ ներկայացված է բացարձակապես մեկ մոդել: Մոդելները պատկերված են կամ կանդնած և ներկայացված են ոչ լրիվ հասակով:

Դիմանելու կամերայնությունը պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ պատկերվողները ներկայացված են առորոշ, պայմանական տարածության մեջ: Գրեթե բոլոր դիմանելուներն ունեն նեյտրալ, հարթային փոն: Մի քանի տասնյակ դիմանելուներից միայն մի քանիսում է, որ խախտվում է այս «կանոնը»: Օրինակ, Շուշանիկ Նադիբյանի դիմանելու, որտեղ ետևին պլանում երեսում է պատուհանի մի մասը ու նրանից բացվող բնանելու, ինչպես նաև լեհ հեղափոխական գ. Միշելու կամ երկու հեծյալ շահերի դիմանելու, որտեղ վերջիններս պատկերված են բնանելու փոնի վրա: Սակայն դժվար չէ նկատել, թե որքան ընդհանրացված և վերացական են այդ «բնանելու» փոնները: Ակնհայտ է, որ Հովնաթանյանն իր ստեղծագործություններում չի դրել տարածության և փոնի լուծման որոշակի խնդիրներ:

Նեյտրալ և հարթային փոնը, որը միջնադարյան գեղանկարչության սկզբունքներից է, Հովնաթանյանը կարեորում է, ելնելով մի քանի նկատառումներից: Առաջինն այն է, որ փոնի նման մեկնաբանումն արդեն իսկ ենթադրում է կամերայնություն, որը սկզբունքքային դեր է խաղում կերպարի ներկայացման և բացահայտման համար: Նեյտրալ փոնի չնորհիվ հորինվածքի կենարունում հայտնվում է միայն ու միայն մոդելը, և կապը նրա ու դիտորդի միջև դառնում է անմիջական և մտերմիկ:

Հովնաթանյանի մոտ հարթայնության սկզբունքն առկա է նաև Փիգուրի և հագուստի պատկերման մեջ: Ի տարբերություն դեմքի մանրամասն և բավականին ծավալային մեկնաբանման՝

Հագուստներն ունեն հարթային լուծում: Հագուստներն ընդհանուր առմամբ միագույն են, նրանց միատարր ֆակտուրան (կառացվածքը) կարծես կլանելով վրձնահարվածները, վերածվում է համատարած գունային հարթության՝ ձևավորելով նաև մարմնի ուրվագիծը և ամբողջական կառուցվածքը: Դա առավել ընդգծված է տղամարդկանց, բայց առկա է նաև կանանց դիմանկարներում, որոնց պարտադիր մուգ հագուստները խիստ կանոնիկ են, դուսպ, առանց ավելորդությունների: Այդպիսին են հատկապես Աստվածատուր Սարգսյանի (1834), Նիկողոս Սուրբունյանի (1830-ակա թթ.), Մելիքովի (1840-ակա թթ.), ինչպես նաև Նատալյա Թեումյանի (1830-ական թթ.) և Նազելի Օրբելյանի (1850-ական թթ.) դիմանկարները:

Հենց հարթությունների, կամ ավելի ստույգ՝ գունային հարթությունների համադրությամբ է պայմանավորված տարածության ձևավորումը Հովհանթանյանի կտավներում: Հիմնականում սե, երբեմն էլ՝ մուգ կապույտ, կանաչ հագուստներին հակադրվում են վառ գունային շեշտադրումները: Գույշների կոնտրաստային համադրության սկզբունքը, որ այդքան հոգէհարադարձ է նկարչին, անշուշտ, անմիջական աղերս ունի միջնադարյան արվեստի հետ: Հագուստների գունային հարթությունները լրացվում են սպիտակ օճիքներով, կարմիր և գեղին ներդիրներով (աստառ, օճիք, գոտի): Բացի այդ հագուստները զարդարվում են մեծ վարպետությամբ և մանրամասնությամբ կատարված բազմազան ատրիբուտներով: Նկարազարդ գոտիներ, մանյակազարդ օճիքներ, արդուզարդով, համրիչով, գրքով: Այստեղ կրկին կիրառվում է հակադրության սկզբունքը: Հարթային և ընդհանրացված մեկնաբանություն ունեցող հագուստին հակադրվում են մանրամասն պատկերված դեկորատիվ էլեմենտները: Ինչպես գեմքի և հագուստի, այնպես էլ հագուստի և դեկորատիվ էլեմենտների հակադրության սկզբունքը հանդիսանում է Հովհանթանյանի կարեռքույժն արտահայտչամիջոցներից մեկը՝ նրա ոճական առանձնահատկությունը:

Ինչպես տեսնում ենք, Հակոբ Հովհանթանյանն իր արվեստում ձգտում է ձևի, գծանկարի և գույնի ընդհանրացման, նա կիրառում է մաքուր, լոկալ գույներ: Նկարչի կտավները կառուցված են մեծ գունային հարթությունների համադրությամբ, որով

էլ պայմանավորված է տարածության և ծավալի ձևավորումը կտավում: Իր ոճին հատուկ գեղանկարչական այս սկզբունքներով Հովնաթանյանի արվեստը կարող է համեմատվել 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի նվազական մի շարք նկարիչների ստեղծագործությունների հետ, որոնք իրենց գեղանկարչությունը կառուցում են հարթայնության սկզբունքով: Այդպիսին են, օրինակ, Գոգենի և Մատիսի ստեղծագործությունները, որոնք ներչնչված լինելով միջնադարյան, ինչպես նաև արևելյան արվեստով, նոր հեռանկարներ են բացում ժամանակակից արվեստի ասպարեզում: Այս իմաստով շատ հարուստ է Հովնաթանյանի արվեստը, շատ լայն է նրա գեղարվեստական դիմապաղոննը:

Խոսելով Հովնաթանյանի վաղ շրջանի դիմանկարների մասին, ուսումնասիրողները նշում են, որ ֆիգուրները պատկերված են որոշակի կաշկանդվածությամբ: Սակայն ծանոթանալով տարրեր ժամանակաշրջաններում նկարչի ստեղծած աշխատանքներին՝ պետք է վստահությամբ ասել, որ այսպիս կոչված կաշկանդվածությունը կամ անշարժությունը, որն առկա է Հովնաթանյանի վաղ գործերում, նկարիչը բոլորովին չի փորձում հաղթահարել իր հասուն շրջանում: Բոլորովին չմնան նկարչի ստեղծագործական զարդացման որոշակի փուլերը (մինչև 30-ական, 30-40-ական և 50-ական թվականներ), պետք է նշել, որ Հովնաթանյանը հենց սկզբից որդեգրում է որոշակի գեղանկարչական սկզբունքներ և հավատարիմ է մնում դրանց իր ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում: Այդ միտքը լիովին հաստատվում է, եթե մենք անզրադառնում ենք Թամարա Սագինյանի դիմանկարին, կատարված նկարչի կյանքի վերջին շրջանում՝ 70-ական թթ., Պարսկաստանում ապրած տարիներին: Այսենզ ֆիգուրի կաշկանդվածությունը հանդիսանում է կերպարի բացահայտման կարևորագույն նախապայմաններից մեկը:

Չնայած երեք քառորդ շրջվածության, ֆիգուրները Հովնաթանյանի կտավներում ստատիկ են՝ մշտապես դեպի դիտորդն ուղղված հայցքով, ինչպես նաև մարմնի և ձեռքերի հաստա-

³ Պ. Դրամյան. Ակոս Օվնատան // Второй международный симпозиум по армянскому искусству (отдельный оттиск). Ереван, 1978, сс. 1-3; Մ. Ղազարյան. Հայ կերպարվեստը XVII-XVIII դդ., Երևան, 1974, էջ 221-225.

տուն և պայմանական դիրքով։ Բացի այդ, պայմանական են նաև այն իրերը, որ «տրվում են» պատկերվողներին. դիրք, թաշկինակ, Համբիչ։ Հովնաթանյանի ոճին հատուկ այս կանոնիկ սկզբունքը նույնպես հարում է միջնադարյան գեղարվեստական մտածելակերպին։ Սակայն պետք է նշել, որ ի տարբերություն իր նախորդների կամ որոշ ժամանակակից նկարիչների Հովնաթանյանն այս սկզբունքը կիրառում է ոչ թե այն պատճառով, որ դեռ գտնվում է «միջնադարի շրջանակներում», այլ դա անում է գիտակցված։ Նա կարողանում է այդ կանոնիկությունը մեկնաբանել յուրովի և ծառայեցնել իր նպատակներին ստեղծելով կատարյալ կերպարներ։ Այս միտքն է հաստատում թեկուզ այն, որ, օրինակ, իր Հայտնի նախորդներից մեջի՝ Հովնաթան Հովնաթանյանի ստեղծագործություններում, թեկուզ և որոշակի պայմանականության առկայությամբ, ներկայացված են բազմաֆիզուր և բազմապլան հորինվածքներ, տարբեր առկուրսներով արված ու բավականին դինամիկ իրենց շարժման մեջ կերպարներ, մինչդեռ այդ գործները դեռևս «միջնադարյան» են իրենց էությամբ։

Հովնաթանյանի գեղանկարչական սկզբունքներից մեկն էլ այն է, որ նկարիչը առավել կարեորում է մողելի գեմքը, օժտում այն անհատականությամբ ցուցաբերելով նաև իր անձնական վերաբերմունքը վերջինիս հանդեպ։ Դեմքերը շատ արտահայտիչ են, մանրամասն մշակված և լուսավոր։ Ընդ որում, գեմքի պատկերման, ինչպես և առհասարակ Հովնաթանյանի գեղանկարչության մեջ, բացակայում է լուսաստվերային մողելավորումը։ Բայց և այնպես գեմքերը ողողված են լույսով, նրանք կարծես օժտված են ինչ-որ ներքին լույսի աղբյուրով և զրանով իսկ հակադրվում են հագուստի անթափանց ֆակտուրային։ Նման տարբերակման մեջ նույնպես կարելի է տեսնել միջնադարյան գեղանկարչական սկզբունքներից մեկը, երբ «դեմքը» հանդիսանալով սրբազան ենթարկվում է գեղանկարչական առանձնակի մշակման։ Միայն Հովնաթանյանի մոտ «սրբացումը» փոխարինվում է կերպարի նկատմամբ ցուցաբերած մեծ հարգանքով և ակնածանքով, որը փոխանցվում է նաև զիտորդին։

Հովնաթանյանի գեղանկարչությունը համարյա զուրկ է լուսաստվերից։ Նրա կտավներում չկա լույսի որոշակի աղբյուր, առկա է ցրված լույսը։ Մինչդեռ իր նախորդների մոտ՝ նույն

Հովնաթան Հովնաթանյանի հաստօցային գործերում մոդելավորումը կատարվում է տոնային համադրության միջոցով՝ ստեղծելով լով լուսաստվերի և ծավալայնության պատրանք։ Ակնհայտ է, որ Հովնաթան Հովնաթանյանը, լինելով դեռ միջնադարյան նկարիչ, փորձում է հաղթահարել միջնադարյան գեղանկարչական սկզբունքները, ինչը չի կարելի ասել Հակոբ Հովնաթանյանի համար։

Այսպիսով կարելի է ասել, որ Հակոբ Հովնաթանյանն իր արվեստով ի հայտ է բերում գեղարվեստական նոր մտածելակերպ, որն իրավամբ բնորոշում է նկարչին որպես նոր շրջանի գեղանկարչության հիմնադիր և նախահայր։ Միենույն ժամանակ ակնհայտ է, որ Հովնաթանյանն իր արվեստի մի շարք առանձնահատկություններով կապված է միջնադարյան ավանդույթների հետ։ Սակայն կապը միջնադարյան գեղանկարչության հետ Հովնաթանյանի արվեստում ունի շատ խոր հիմքեր։ Ծանոթանալով Հովնաթանյանի գործերին կարելի է վստահությամբ պնդել, որ նկարիչը դուրս է միջնադարյան ավանդույթների շրջանակներից, և նրա անդրադարձը նախորդ դարաշրջանին պայմանավորված է այն գեղարվեստական խնդիրներով, որ նկարիչը դնում է իր առջև։ Այս կարճ անդրադարձը արվեստագետի գեղանկարչական մի շարք առանձնահատկություններին ցույց է տալիս, որ Հովնաթանյանի արվեստի այս առանձնակյունը նոր, ավելի խորացված ուսումնասիրության կարիք ունի։

ԻՎԵՐ ԹԱԶԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՂԱԶԱՐ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Պարսկաստանը 1785 թվականից մինչ 1914 թվականը գտնվել է Ղաջար Հարստության տակ: Ղաջարական Հարստության հիմնադիրն էր Աղա Մուհամմեդ Խանը (1785-1787): Ղաջորդարար թագավորել են Թաթթալիկ շահը (1798-1834), Մուհամմեդ շահը (1834-1848), Նասեր Էլ Դին շահը (1848-1896), Մուզաֆեր Էլ Դին շահը (1896-1907), Մուհամմեդ Ալի շահը (1907-1909) և վերջին՝ Ահմեդ շահը (1909-1914):

Ղաջարական գինաստիճայի դերը Պարսկաստանի նորագույն պատմության մեջ լայնորեն ուսումնասիրվել է իրանական պատմագրության կողմից: Պետք է նշել, որ այդ իշխանության վերաբերյալ գնահատականը միշտ չէ, որ միանշանակ է եղել: Քանի որ այդ շրջանում ավանդապահ Իրանը դանդաղորեն սկսեց մողեռնիդացվել, այստեղ ձևավորվում ու կազմավորվում էր քաղաքական, տնտեսական, հասարակական ու մշակութային զարգացման նոր ուղու վրա կանգնած «Եվրոպականացող Իրանը»:

Ղաջարական արվեստի ինքնուրույն զարդացման սկիզբը դեռևս վերաբերում է 16-րդ և 17-րդ դարերին: Հանրահայտ նկարիչներ Քամալ Օլ Դին Բեշզադը (1460-1535) և Ռեզա Ալբասին (1572-1634), որոշակիորեն պահպանելով գեղանկարչական հին ավանդները, նորամուծություն կատարեցին պարսկական կերպարվեստը: Նրանք իրանական գեղանկարչական կյանքում հեղաշրջում արեցին, ավելի ստույգ սկսեցին ստեղծագործել ռեժիսուական ոճով: Հետագայում նրանց հետևորդներն իրենց հետ բերեցին հեռանկարային լուծումներ, ինչպես նաև ծավալայնություն, մարդկային շարժունակություն, լուսաստվերային համակարգ: Այստեղ տեղին է հիշատակել ամենահայտնի եվրոպական գեղանկարիչներից մեկին՝ Մուհամմեդ Զամանին (1639-1708), որն առանձնակի տեղ է գրավում Իրանի գեղանկարչության պատմության մեջ: Նրա մասին հիշատակվում է, որ նաև Արքաս Երկրորդի հրամանով, Մուհամմեդ Զամանը արևմտյան ար-

վեստի ուսումնասիրման նպատակով մեկնում է իտալիա¹, փոխում իր կրօնը և դառնում քրիստոնյա: Խորապես ուսումնասիրելով եվրոպական մշակույթը, նա իր հետ հայրենիք ներմուծեց արևմտյան արվեստի առանձնահատկությունները: Սակայն Մուհամմեդ Զամանի վերաբերյալ իրանցի արվեստարան Քարիմ զադե Թարրիզիի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջինս ընդհանրապես երկրից չի բացակայել, այլ Թեհրանից տեղափոխվել է Սպահան, մասնավորապես՝ Նոր Ջուղա², որտեղ շփմբել է Հայ արվեստագետների հետ: Մեզ բոլորիս հայտնի է, որ նոր ջուղայինցիներն առևտրատնտեսական և մշակութային կապ ունեն Եվրոպայի, մասնավորապես՝ Վեհնեաթիկի հետ: Տեղի յուրահատուկ մշակութային մթնոլորտը, Եվրոպայից Թափանցած նորամուծությունները և իրանական միջավայրի թելադրած նոր չափանիշներն աստիճանաբար բերեցին արևելյան օրնամենտից և արևմտյան պատկերագրությունից առաջացած նոր ոճ: Այնուամենայնիվ փաստ է, որ յուղանկարչությունը և այս տեխնիկայով ստեղծագործելու բոլոր միջոցները՝ ինչպիսիք են յուղաներկը, Համապատասխան վրձինները և, իհարկե, կտավը Մուհամմեդ Զամանի օրոք Եվրոպայից ներմուծվեցին Պարսկաստան: Հետագայում նոր ոճը տարածում գտավ 18-րդ դարում, Հատկապես, Զանդիի Հարստության թագավոր Քարիմ խանի իշխանության ժամանակ: Եվ, ի վերջո, իր տարածման և զարդացման գագաթնակետին Հասավ Ղաջար Հարստության թագավոր Ֆաթթալիհ շահի օրոք: Այս արվեստաներ թագավորը մշակութային կյանքը կարևորելուց և արվեստագետներին հովանավորելուց զատ, նկարիչների համար որպես բնորդ էր ծառայում: Այս առումով, որպես ժամանակաշրջա-

¹ Մուհամմեդի Խ. և. Դավալու Մ., Քարիմին Հանուրի Իրան, Իրանի արվեստի պատմություն, Թեհրան, 2004, էջ 88, պարսկե:

² Եաւ Արքան Առաջին թագավորը, զանազան նպատակներով, մեծ թվով հայերի Իրան զալթեցրեց և Հաստատեց Սպահանի Նոր Ջուղայի շրջանում: Այդ շրջանում Հայերի ամենամերքնոր ձեռքբերությը, Նոր Ջուղան մշակույթի կինոտրոն դարձնելու ուղղությամբ, վարչական կիրառական և մշակութային անկախությունը եղավ: Այնուհետև իրանահայերը իրեն Իրանի ու Եվրոպայի փոխհարաբերության կանուքը, կարեւոր զերպատարություն ունեցան առևտրական, մշակութային և այլ բնակավառներում:

նի յուրատեսակ փաստաթուղթ է ընկալվում 1813 թվականին Մեհր Ալիի ձեռքով ստեղծված Թաթթալիհ շահի դիմանկարը:

Հնդհանուր առմամբ Զանդին հարստության և դաջարական արվեստի ոճը կարող ենք հիշատակել մեկ անվան տակ այսպես կոչված «Զանդ և դաջար դպրոց», հետեւաբար այդ դպրոցի ներկայացուցիչներին նույնպես: Առանձնակի ուշադրության են արժանի Ազա Սադեղը, Մուհամմեդ Ալին և Մուհամմեդ Հասանը:

Դաջարական դինաստիայի հետ կապված մի առանձնահատուկ փաստ լուսանկարչությունը Պարսկաստան է մուտք գործել նույն ժամանակ, Մուհամմեդ շահ Ղաջարի օրոք՝ 1844 թվականին: Այնուամենայնիվ, ի տարբերություն բազմաթիվ այլ երկրների, Պարսկաստանում գեղանկարչությունը շարունակեց դարգանալ՝ չխանգարելով, որ լուսանկարչությունը ևս ունենա մարդկային գործունեության մեջ իր արժանի տեսքը: Բայց նույնը չենք կարող ասել թիֆլիսի մասին: Թիֆլիսում լուսանկարչության ի հայտ գալը Հակոբ Հովնաթանյանի ստեղծագործական ընթացքի համար ճակատադրական դեր խաղաց և այդ պատճառով նա մեկնեց Պարսկաստան: Եղնելով Մանյա Ղաջարյանի ուսումնասիրություններից հարկ է հիշատակել, որ Հակոբ Հովնաթանյանը Պարսկաստանում ինը աշխատանք է Հավերժացրել: Նասեր Էլ Դին շահը նկարչին է շնորհում «Նաղաշ բաշի» (նկարիչների գլխավոր) տիտղոսը և «Էլմի» (զիտություն) շքանշան³:

Մինչ լուսանկարչությունից անցում կատարենք դաջարական գեղանկարչական արվեստին՝ հարկ է նշել նաև ժամանակի կենցաղի և նորաձեռության փոփոխությունների մասին, որն աննկատ չի մնացել դաջար գեղանկարիչների կողմից: Ավանդական տարագների ոճի փոփոխման թեման որոշակիորեն կապված է հայագիտ լուսանկարիչ Անթուան Ակրուգինի հետ, որը նասեր Էլ Դին շահի պալատական լուսանկարիչն էր: Նա ժամանակ առ ժամանակ արվեստասեր թագավորին գեղարվեստական լուսանկարներ էր ցուցադրում: Հերթական անգամ թագավորին մատուցեց բաղետային հանդերձանքով երկու եվրոպացի կանանց լուսանկար: Վերջինս այնքան դուր եկավ թագավորին, որ առատա-

³ Մ. Ղաջարյան, Հայ կիրապարփեսուը XVII-XVIII դարերում, Երևան, 1974, էջ 229:

ձեռն գտնվեց Սևրուգինի հանդեսից Շահի հետաքրքրությունը պարունակիների զգեստի հանդեպ բավարարվեց այն փաստով, որ նա հրամայեց Հարեմի ազգային ավանդական լայն ծալքերով տարատը փոխարինել այդ թութուս կոչվող զգեստով: 19-րդ դարի վերջին քառորդում Հարեմում արված լուսանկարներում և ընդհանրապես դաշտական գեղանկարչության մեջ կանայք, ինչպես նաև տղամարդիկ ազգային զգեստի փոխարեն ներկայացված են թութուս կոչվող զգեստով:

Վերադառնալով գեղանկարչությանը պետք է նշել, որ դաշտարների օրոք կարուկ աճում և զարգանում են նախորդ դարերի արվեստագետների ստեղծած գեղանկարչական նոր հատկանիշները: Այդ ընթացքում արեմտյան արվեստը, մասնավորապես գեղանկարչությունը տարածելու հարցում հատկապես շահագրգռված էր Նասեր Էլ Դին շահը: Այդ նպատակով 1851 թվականին Թիհրանում բացվեց «Դար Օլ Ֆոնուն» բարձրագույյն դպրոցը, որը համապատասխանում էր եվրոպական չափանիշներին: Շահի կարգադրությամբ համալսարանում դասավանդում էին եվրոպական տարբեր երկրներում կրթություն ստացած մի խումբ պալատականներ և հրավիրյալ օտարազգիներ: Նրանք իրենց հետ ըերում էին եվրոպական արվեստում տեղ դտած ավանդները, որոնք սակայն գժվարությամբ էին ընկալվում տեղի ազգաբնակչության կողմից:

Դաջար նկարիչները փորձում էին լուծել գեղանկարչության և ճարտարապետության հիմնազդրման խնդիրը: Գեղանկարչությունը մի կողմից բնութագրվում էր իր զարդարվեստով և մյուս կողմից՝ գեղի նատուրալիստականություն ձգտումով: Լույսի հիմնահարցի նկատմամբ հետաքրքրությանը ավելացան որիթմիկ գծերը և հեռանկարային կառուցումների որոնումները: Գեղանկարչության օրինակներն ապշեցնում են իրենց զարդանախային և սյուժենային գրվագներով: Նկարիչների գիտակցության մեջ հետզհետե ավելի է հաստատվում մարդկային անձնավորության և նյութական աշխարհի նշանակության մասին պատկերացումը: Կրոնական և դիցարանական թեմաներով նկարներում գեղանկարիչներն ընդգրկում են կոնկրետ միջավայրը, ժողովրդական տիպեր, կենցաղի ստույգ դիտված իրեր և մանրամասնություններ: Առանձին հերոսների կերպարների հետ միասին

դաջարական դինաստիայի ականավոր գեղանկարիչների աշխատանքներում երեան են գալիս թագավորների և պալատական անձանց կերպարներ: Գեղանկարիչների և պատվիրատունների ամենասիրած թեմաներից էին նաև հանդիսավոր խնջույքների և տոնախմբությունների խանգամավառ պատկերները, որոնցով այդ ժամանակ փառաբանվում էր աղնվական իրանը: Գեղանկարիչները խորացնում են պատկերահանգողների բնութագրերը՝ ի հայտ բերելով կեցվածքի, շարժումների, իրենց ժամանակակից նորառն տարազ հագնելու սովորության առանձնահատկությունները: Երբեմն, թատերայնությունը և գեղադարդային խնդիրների լուծմամբ հափշտակվածությունը նվազեցնում են կերպարների բնութագրերի լիարժեքությունը:

Առանձնապես բարդավաճեց դիմանկարչությունը: Հաջարական դիմանկարի գեղարվեստական իմաստը, նրա կոմպոզիցիոն լուծումը հեռու է դիմանկար ստեղծելու իրանական ավանդական մեկնարանումից: Նկարիչներն արդեն ամբողջությամբ չեին կիրառում պատկերագրական կանոնները՝ ինչպես օրինակ գույնը, մարդկանց մեստերը, մանրանկարչության պատկերագրությունը, որոնք ունեին խորհրդանշական բնույթ: Ֆիգուրը զբաղեցնում է նկարի գրեթե մեծ մասը (նկ. 6): Հաջար վարպետները չեին հրաժարվում նաև գեղանկարչական մանրամասնումից, ինչը հատուկ է թե՛ իրանական և թե՛ ամբողջ իսլամական արվեստին: Դիմանկարներում առաջին հայացքից աչքի են ընկնում նշանեւ աչքեր ունեցող նուրբ գեմքերը. Հաջորդաբար կանոնավոր համամասնությունները և, ի վերջո, մի ամբողջություն են դառնում հանդիսատ ու սահուն շարժումներով: Խորհրդավոր հայացքով կանանց և տղամարդկանց դիմանկարները մեզ գրավում են իրենց մտքի խորությամբ, աղնվաբարու և ոգեշնչված բնավորությամբ: Կոմպոզիցիայի հավասարակշռված կառուցվածքում զգացվում է ներքին օրինաչափություն: Համեմատելով ավանդական մեկնարանության հետ, նկարիչները ներկայացնում են նորաբարական լուծումներ: Հաջար վարպետներին հատուկ է ընդհանրացման մեծ ուժը, յուրաքանչյուր բնորդի համար գտնում էին հատուկ կեցվածք և շարժում: Այնուամենայնիվ, հասակով մեկ կանգնած դիմանկարներն ընդհանուր առմամբ կարող ենք այսպես բնութագրել. երեք քառորդ թեքությամբ և ոտքերը զուդահեռ մի ուղղությամբ

միանման կոմպոզիցիա: Տղամարդկանց ձեռքերը գոտկատեղին դրած կամ թուր բոնած, իսկ կանանց ձեռքերը պարային շարժումներով են ներկայացված: Կանայք կամ ուղղակի պարում են, կամ էլ իրենց ձեռքում պահում են ծաղիկներ, երաժշտական գործիքներ, մրգեր և այլն: Շարժումների մեղմությունը, ոիթմիկ գծերի սահունությունը և գեղեցկադեմ հայացքները ներշնչված են ավանդական մանրամասնություններով և ամբողջության մեջ նպաստում են կոմպոզիցիայի պատկերային կառուցվածքի վեմ բանաստեղծականության դրսերմանը: Ոչ մի մանրամասն չի խախտում գեղակերպ արտահայտչականությունը: Նրանց կատարյալ կերպարների քնարական ու ներդաշնակ կեցվածքին նպաստում է երկրորդ սլանը, որն իր մանրամասն մշակմամբ նշանակալի տեղ է գրավում աշխատանքների մեջ: Դրանք հիմնականում նույնական միատեսակ են: Ընդհանրապես, պիմանկարների համար որպես փոն է ծառայում իտալական Վերածննդին բնորոշ պատուհանը, որի մի կողմում, երեմն էլ՝ երկու կողմերում հավաքած է վարագույրը: Պատուհանից երևացող լանդշաֆտի միջոցով դիտողին կապում են բնության անծայրածիր պատա տարածությունների հետ: Երկրորդ տարբերակում բնորդը հենվել է պատշգամբի պատին: Այս զեպքում պատի զարդարանքը կապված է տեղական ավանդությունների հետ: Դրանք հիմնականում աստղաձև և բազմանկյուն նախշերն են, որոնք դարեր շարունակ կիրառվել են իսլամական արվեստի տարրեր ժանրերում: Դեկորատիվությունը և օրնամենտալությունն արվեստում ապշեցնում են ֆորմայի մակերեսային գնահատմամբ: Զարդանախշերի կիրառումը և տեղադրումը, դրանց սիթմը համապատասխաննեցված և ենթարկված է ճարտարապետության հիմնական գաղափարախռությանը: Այս բոլորը համադրվում էր ցայտուն և վառ գույներով ստեղծագործությանը տալով էմոցիոնալ մեծ արտահայտչականություն: Թափանցիկ շերտերով ստեղծած հնչեղ գույնները մեղմացնում են ուրվագծերը: Հանգեսային-հնչեղ են կարմրի ու կապույտի մուգ երանգները: Տեսնելով այս ամենը համոզվում ենք, որ նկարիչներն իրենց մտահղացումներն իրականացնելու համար վարպետորեն օգտագործել են յուղաներկ նկարչության առանձնահատկությունները: Պատկերվում էին նաև որսի տեսարաններ, հեծյալի և պատանու ֆիգուրներ, թռչունների և գաղան-

ների պատկերներ, որոնք անխալստ միասնություն են կազմում շրջապատող բնության հետ։ Կերպարների էության բացահայտմանը նպաստում է բնանկարը, որը նշանակալի տեղ է դրավում դաջարական գեղանկարչության մեջ։ Բնության հետ մարդու ներդաշնակ կապն այս շրջանի կարևոր առանձնահատկություններից է։

Պետք է նշել, որ մասնագետների մի մեծ զանգված երկարժամանակ որոշակի վերապահումով է վերաբերել զաջար շրջանի մշակույթին՝ համարելով այն իրանական պատմության մեջ անկումային փուլ։

Սակայն, մեր կարծիքով, այս շրջանի գեղագիտական նմուշները, անշուշտ, մեծ արժեք են ներկայացնում՝ իրեն իրանական մշակույթի առանձին, յուրօրինակ էպոխա։

Գարեգին ՔՈԹԱՆՁՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

ՀԱԿՈԲ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԵՐԿՈՒ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ես, ինչպես և մեր կերպարվեստով զբաղվող բոլոր արվեստաբանները, գիտեի և սիրում էի մեծ գեղանկարիչ Հակոբ Հովնաթանյանի ստեղծագործությունը։ Եվ, բնականարար, մեր նկարչի երկու հարյուրամյա հորելլյանը կրկին ինձ մոտ ցանկություն առաջացրեց անդրադառնալ նրա գեղանկարչությանը, վերստին ընկալել և գիտակցել Հովնաթանյանի գեղարվեստական ժառանգությունը։ Հերթական անգամ ուշադրությամբ դիտելով Ազգային պատկերասրահում նրա ստեղծագործությունների ցուցադրությունը ևս հայտնաբերեցի երկու դիմանկարների անհամապատասխանությունն այդտեղ կախված Հակոբ Հովնաթանյանի մյուս բոլոր ստեղծագործություններին։ Դրանք ինձ խորթ էին թվում հանճարեղ գեղանկարչի դիմանկարների հավաքածուի շարքում։ Կիսելով իմ կարծիքը արվեստաբան Վիգեն Ղազարյանի հետ, ես որոշեցի լրջորեն զբաղվել այդ հարցի պարզաբանմամբ, այն է՝ հասկանալ թե ինչում է կայանում տարբերությունը այս երկու դիմանկարների և մեր մեծ գեղանկարչի կտավների գեղարվեստական առանձնահատկությունների միջև։

Հայտնի է, որ կերպարվեստում վերադրման կամ որոշարկման հարցն առանձնահատուկ բարդություն ներկայացնող խնդիրներից է, որը պահանջում է ոչ միայն արվեստի պատմության լավ իմացություն, կերպարվեստի տվյալ տեսակի արտահայտչականությունը, սկզբունքների լայն գիտելիքներ, այլև՝ բազմակողմանի ծանոթություն կոնկրետ նկարչի անհատական ձեռագրին։ Այս ամենը քաջ գիտակցելով, ես փորձել եմ Հովնաթանյանին վերադրվող երկու աշխատանքների՝ Գրիգոր Թումանյանի դիմանկարի և Հովնաթանյանի գեղանկարչության համար անսովոր մեծ չափսների հասնող՝ Անհայտ անձի դիմանկարի վերլուծության միջոցով քննել և վիճարկել Հովնաթանյանի վրձնին դրանց պատկանելության հարցը։

Նախապես փաստենք, որ նշված երկու աշխատանքներն էլ չեն ընդգրկվել Հակոբ Հովհաննյանի արվեստի մեծ գիտակ և, փաստորեն, նրա նկարչությունը բացահայտող ու հավաքող, ինչպես նաև առաջին ուսումնասիրող-որոշարկող խոշոր գիտնական Ռուբեն Դրամյանի կազմած կատալոգի մեջ¹:

Առաջինն ու ամենահականը, որն ի հայտ է գալիս նշված երկու դիմանկարների համեմատական վերլուծության ժամանակ, գեղարվեստական որակի ակնհայտ զիջելն է անվանի վարպետի գեղանկարչության արժանիքներին, թեկուղ դրանք որոշ ցուցանիշներով համահունչ են մեր մեծ վարպետի ստեղծագործական առանձնահատկություններին:

Այսպես, նշված մեծագիր կտավը (նկ. 7) բնորդի 3/4 կեցվածքով, գոտիին բռնած ձեռքով, հագուստով, հանդերձանքի մանրամասներով, ինչպես իսկ դիմանկարվողը՝ ինքնին, միանդամայն բնորոշ է Հովհաննյանի դիմանկարներին:

Ինչ վերաբերում է Հաջորդ՝ Գրիգոր Թումանյանի դիմանկարին (նկ. 8), ապա խնդիրն այսանդ, փոքր-ինչ այլ է: Իսկույն նկատվում է անկասկած ավելի բարձր կատարողական վարպետությունը և մի շաբթ այլ ցուցանիշներով մեր վարպետի ստեղծագործության բնույթին նույնպես մոտ լինելը: Դրանցից են՝ դիմանկարը պատկերային հարթության վրա հմուտ տեղադրելը, մանրամասների հստակ պատկերումը:

Այդուհանդերձ, նմանության թվարկված ցուցանիշները դեռ չեն կարող հիմք ծառայել նշված դիմանկարները մեծ վարպետի վրձնին վերադրելու:

Սկսենք սրով և զգից կախված շքանշանով Տղամարդու դիմանկարի գեղարվեստական առանձնահատկությունների համեմատական վերլուծությունից:

Հովհաննյանի գեղարվեստական օժտվածության ամենաուժեղ կողմերից է նրա կոմպոզիցիոն հազվագյուտ վարպետությունը, որը հարավորություն է տալիս նրան դիմանկարների կոմպոզիցիոն կառուցվածքի միևնույն ընդհանուր սխեմայի սահմաններում ամեն անդամ գտնել անկրկնելի լուծում: Մեղ

¹Տե՛ս Բ. Դրամյան. Ակոپ Օվնատան. Երևան, 2006, զրքի հավելվածը:

Հայտնի բոլոր դիմանկարներում Հովնաթանյանը, փոփոխելով իր ընդունած Հորինվածքային սխեման, յուրաքանչյուր առանձին գեղքում յուրավի է լուծում ֆիզուրի և Փոնի համամասնության հարցը, ընդ որում ոչ միայն կտավի տարածության մեջ ֆիզուրի ուացիոնալ տեղադրման հարցը, այլև՝ ինչը չափազանց կարևոր է, լուծում է ամենատարեր գեղարվեստաբավանդակային խնդիրներ: Այսինչ դիտարկվող դիմանկարում ֆիզուրի և Փոնի համաշխափական ներդաշնակության խնդիրը անհաջող է լուծված: Տղամարդու ֆիզուրը կտավի տարածությունում գտնվում է ակնհայտ նեղվածքի մեջ, հարկապես ձախ ու աջ կողմերից: Այդ կողմերից շրջանակը կարծես ճնշում է բնորդի վրա, ստեղծելով կոմպոզիցիոն կառուցվածքի համար բացարձակ ավելորդ լարվածություն:

Հայտնի է, որ Հովնաթանյանի նկարներին հատուկ է ձեւերի մեկնաբանման որոշակի հարթապատճերայնություն, սակայն դրա հետ մեկտեղ մենք միշտ գգում ենք դրանց ծավալատարածական հատկությունները, դրանց անհատական նկարագրերը: Մինչդեռ վերլուծվող դիմանկարում թե՛ գլխի, թե՛ հատկապես մարմնի ծավալային կերպավորումն այնքան անհմտորեն է արված, որ հասնում է առավելագույն հարթեցվածության: Թվում է, թե բնորդին սեղմել են նկարի Փոնին, այն գեղքում, երբ Հովնաթանյանի մոտ ֆիզուրներն ընկալվում են Փոնի հարթության առջև, միենույն ժամանակ վերջինից չանչատված:

Սակայն առավել ակնառու է տարբերությունը պատկերի գեղանկարչական մեկնաբանման մեջ, մասնավորապես, տոնային կերպավորման միջոցներով ձեւերի մշակման եղանակում:

Ինչպես Հայտնի է, գեմքերի կերպավորումը կամ այլ կերպ մոդելավորումը Հովնաթանյանը կատարում է հատակ և վստահ ձեռքով: Նրա ցանկացած դիմանակարում մենք պարզորոշ գցում ենք գլխի ծավալային կառուցվածքը դրա բոլոր մանրամասներով: Քիթը մշտապես գեմքի վրա հատակ առանձնանում է, բացարձակ ճշգրիտ են տեղադրված ակնախնձորները ակնախռոչներում, պարզորոշ են ընկալվում կողակի պլաստիկական հատկությունները և այլն:

Մինչդեռ վստահորեն կարելի է ասել, որ Անհայտ տղամարդու դիմանակարի հեղինակը պատկերացում չունի տոնային

մողելավորման միջոցով ծավալային ձևերի հայտածման եղանակների մասին: Ընդ որում նա չի էլ ձգտում ծավալի զգացում ստեղծել, և դիմանկարի ծավալային բնութագիրը ստանում է 3/4 շրջադարձով կեցվածքից: Նշենք, որ նույնիսկ այդ դեպքում էլ չկան գծանկարային շեշտադրումներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ պատկերացում կազմել դիմի կառուցվածքի մասին: Ասենք նաև, որ բնորդի քիմը կամ շուրջերը ավելի շուտ երեան են հանգում գծային ուրվագծման, քան տոնային կերպարվորման միջոցով: Նման չոր գծային երիդավորումը բացարձակ խորթ է Հովնաթանյանի լիարժեք գեղանկարչական եղանակին: Մավալի մշակման հարթապատճերային, իսկ ավելի ճիշտ թույլ տանք մեզ ասել մամլած բնույթը, դիմից բացի, ամբողջովին վերաբերում է նաև ձեռքի պատկերմանը: Իսկ եթե ուշադրություն դարձնենք դիմանկարվածի մարմնի մեկնարանմանը, ապա ավելի պարզ կրացահայտվի կերպարների ծավալային ձևերի նկատմամբ հետաքրքրության բացակայությունը:

Ավելի կտրուկ է տարբերությունը քննարկվող դիմանկարի գունային ասպեկտների մշակման և Հովնաթանյանի գեղանկարչական համակարգի միջև: Ինչպես հայտնի է, դիմանկարվող պերսոնաֆուրի յուրաքանչյուրի բնութագրուման հիմքում ընկած է նաև գույնը: Այս առումով Հովնաթանյանի պատկերած բոլոր դեմքերն անկրկնելի են: Ավելին՝ նրանցից յուրաքանչյուրի դեմքը մշակված է կիսասուների հարստությամբ, ինչն իսպառ բացակայում է վերլուծվող դիմանկարում: Այստեղ դեմքի մաշկի գույնը միապաղաղ մարմնագույն է՝ զուրկ գունային նկանչներից: Այստեղ չկա նաև կոնկրետ անհատական գունային բնութագիր: Դիտարկվող դիմանկարի մեր վարպետի վրձնին չպատկանելն է մատնանշում նաև պատկերի տարբեր մասերի գունային մեկուսացվածությունը. դրանք ընդգրկված չեն մի միասնական գունատոնային միջավայրի մեջ, որով առանձնանում են Հովնաթանյանի կտավները:

Ի տարբերություն քննարկված աշխատանքի, հաջորդ՝ սպիտակ վերնաշապիկով երիտասարդ տղամարդու դիմանկարը կատարման վարպետության առումով համեմատաբար ավելի բարձր է: Վերջինիս գեղանկարչատեխնիկական կատարումը որոշ չափով ավելի մոտ է Հակոբ Հովնաթանյանի նկարելաեղանակին:

Այն իրականացված է բաղմաշերտ գեղանկարչությամբ, առանձնանալով հարթ փակտուրայով և կերպարի պատկերային հարթության ավելի մանրամասն մշտկմամբ: Միևնույն ժամանակ այս դիմանկարը հեռու է մեր վարպետի նկարների դունային հարթության մշակման համարձակ, հարուստ, վստահ ու ազատ վարպետությունից: Այս դիմանկարի հեղինակի պարզունակ արհեստավարժությունը խորթ է Հովնաթանյանի գեղարվեստական ճաշակին: Շավալի տոնային մողելավորման մեթոդին թույլ տիրապետելը պայմանավորում է պատկերի արհեստական սեղմվածությունը և ծավալը վերարտադրելու անկարողությունը: Շավալային ձևերի վերարտադրման մեջ չկա նուրբ և փափուկ անցումներ անելու ունակություն, ինչպես և եռանդուն մեկնարանման կարողություն: Բացակայում է դեմքի դունային լուծման այն համոզիչ կենդանությունը, որը հատուկ է Հովնաթանյանի դիմանկարների ամեն մի առանձին պերսոնաժի:

Սակայն, ամենաչափան և ամենաբացահայտ տարբերությունը պերսոնաժի Հոգեբանական բնութափիրն է՝ դիմանկարներում անհատական անկրկնելի առանձնահատկությունների բացակայությունը, կամ զրա անորոշությունը, ինչն ակամայից դրում է մտաբերել Հովնաթանյանի դիմանկարներում պերսոնաժների առավելացույն անհատականացումը:

Քննարկվող դիմանկարի գեղանկարչական մեկնարանումը որոշ ցուցանակային արհեստականության, մի տեսակ տիկնիկայնության տպավորություն է գործում: Եթե մի փոքր կտրուկ արտահայտվելինք, կարելի էր ասել, որ այն որոշ ընդհանուր գծերով նման է վարպետորեն կատարված վարսավիրանոցային ցուցատախտակի, որ մատնանշում են բժամինդիր և մանրակրկիտորեն նկարված մազերի սանրվածքը, նորաձեռքեն պտտեցված բները, որոնք թվում են դեմքին փակցված: Ընդհանուր առմամբ ողջ կերպարին հատուկ է ընդհանուր արհեստականություն և արտաքին սալոնային քաղցրություն:

Նշենք, որ կատարման եղանակը գեղանկարչական չէ, ձեզերի մեկնարանությունն ունի շեշտված ուրվագծային կտրուկություն, այսպես ասած՝ զրաֆիկականություն: Զներն ընկալվում են այնպես, կարծես ստվարաթղթից լինեն կտրված: Դրանք

ընդգրկված չեն ֆոնի տարածքի մեջ, այլ ասես վասկցված են վեր-
ջինի վրա:

Թվարկված բոլոր հատկությունները խորթ են Հակոբ Հով-
նաթանյանի արվեստին: Նրա դիմանկարներին հատուկ է կենդա-
նություն, ճշմարտացիություն, անհատական և Հոգերանական
բնութագրերի բացառիկ սրություն, գեղանկարչության կատար-
յալ վարպետություն և, վերջապես, նրա դիմանկարներից յուրա-
քանչյուրն անկախ պատկերված անձից՝ նկար է ինքնին, որը
կրում է բարձրագույն գեղարվեստական արժեքներ:

Լիլիթ ԵՐՆՁԱԿՅԱՆ,
Արուսյակ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

Հայ երգարվեստը քաղաքական, սոցիալ-տնտեսական պայմանների բերումով ուշ միջնադարում նոր հիմքերի վրա սկսեց Հարաբերվել իրեն շրջապատող մահմեդական աշխարհի գեղարվեստական երեսությների հետ։ Պահպանելով գեղջկական երգ - երաժշտության անսաղարտությունն ու ուրույն կերպվածքը, սահմանագատելով եկեղեցական երաժշտությունը՝ իրեւ արևելաքրիստոնեական հոգևոր երգարվեստի վառ և ինքնատիպ երեսությ՝ այն իր ժողովրդամասնագիտացված ճյուղով հաստատվեց Արևելքի բանավոր ավանդույթի երաժշտաբանաստեղծական՝ աշուղական արվեստի ասպարեզում։

Աշուղական արվեստը կոչված էր ծառայելու հիմնականում քաղաքային բնակչության «երկեղու» և եռակեղու» խավերին, բավարարելու նրանց գեղագիտական պահանջները։ Կենցաղային ավանդական մշակույթը, տվյալ տարածքում իշխող լեզուն անդրադառնում էին կատարողական ոճի և երկացանկի վրա, որը կազմված էր աշուղական երգերից ու սիրավեպերից երաժշտաբանաստեղծական դրվագներից, պարեղանակներից ու մուղամներից։

Արևելքի մյուս երկրների աշուղների նման Հայ աշուղները ևս ստեղծեցին իրենց կատարողական դպրոցը, վոկալ արվեստի սեփական սկզբունքները։ Իրենց արվեստով ընկալելի լինելու միտումն է մղել Հայ երաժիշտներին մշակելու Հայոց «ութձայնը» պարսկաարաբական ձայնակարգերի հետ Հարաբերակցելու տեսական հիմունքները, ծնունդ է տվել Հայատառ թուրքերեն երգերի, արևելյան ոճ ու երանգավորում ունեցող՝ գեղգեղանքներով Հարուստ մնղեղիների ստեղծմանը։

Հայ աշուղները չեն սահմանափակել միայն կատարողական գործունեությամբ։ Նրանցից շատերը զբաղվում էին երաժ-

տության տեսության հարցերով, նոտագրում և հրատարակում էին արևելյան պրոֆեսիոնալ արվեստի նոր նմուշներ:

Ընդհանուր ծագումնարանական արժատներով է բացատրվում այն փաստը, որ Հայկական տաղերը կատարելու համար Հեղինակները տեքստի վրա նշում էին պարսկական կամ թուրքական մուղամների անվանումներ, այսինքն, որոշակի լադախնառնացիոն միկրոսխառնմների, որոնք իրենց համարժեքն ունեն Հայկական հոգեւոր երաժշտության մեջ:

Սկզբնավորվելով օտար միջավայրում՝ Հայ աշուղությունը տվեց որոշակի արևելյան թեքում ունեցող պարսկա-Հայկական, թուրքա-Հայկական և վրացա-Հայկական կազմավորումներ: Օրինաչափ կերպով վերանալով պատմամշակութային ասպարեզից, իրենց տեղը զիջելով բուն Հայկական աշուղական դպրոցին՝ հիշյալ թեքում ունեցող դպրոցների ներկայացուցիչներն անդնահատելի ավանդ ներդրեցին աշուղական արվեստի երաժշտաբարտահայտչական ձևերի ու կառուցվածքային սկզբունքների մշակման ոլորտում:

Աշուղական արվեստի հայացումը Մերձավոր Արևելքի մշակութային խառնարանում ընթանում է լեզվի, կրոնի և աղդակային երաժշտամտածողության առանձնահատկություններով պայմանավորված ազգային ինքնության խնդիրների հստակ ըմբռնումով: Հայ աշուղները քրիստոնյա են, նրանց հովանավորող և երաժշտաբանաստեղծական ձիրքով օժտող սրբություն էր ճանաչվել Մշուլթան Սուրբ Կարապետը:

Փաստերը վկայում են, որ աշուղների մեծ մասը լավ ծանոթ էր «Աստվածաշնչին»: Աստվածամոր, աստվածաշնչյան սրբերի ու եկեղեցու նվիրյալների գովասանությունների հանդիպում ենք այնպիսի աշուղների ստեղծագործություններում, ինչպես աշուղ Ալլահվերդին, աշուղ Իվանը, աշուղ Ղարան, Ղունվիանոս երդիչ Կարնեցին, Միսկին Ստեփանը և ուրիշները:

Միայն գովասանքով ու փառաբանություններով չի սահմանափակվում աշուղների վերաբերմունքը քրիստոնեական հավատքի նկատմամբ: Նրանց ստեղծագործություններում, ինչպես և միջնադարյան տաղերգունների մոտ, հանդիպում ենք նաև կրոնական բնույթի խոհափիլիսոփայական երգերի, որտեղ պարզաբանվում են աստվածաշնչյան դրվագներ, խորհրդական ներկայացուցակներ:

ևն արվում Աստծո և ազգի առջեւ մարդու ունեցած պարտքի, մարդ արարածի գոյության իմաստի, չար ու բարի արարքների, այս ու Հանդերձյալ աշխարհների, հոգևորի ու մարմնեղենի վերաբերյալ:

Աշուղների մեծ մասի համար, թերեւս, այնքան էլ էական չի եղել ընդգծել ազգային կամ կրոնական պատկանելության գործունը, առավել կարևոր է համարվել վարպետության ու հեղինակության ձեռքբերումը:

Մասնագիտական վարպետության դրսելորման հիմնական պայմանաձևներից է երաժշտարանաստեղծական մրցույթը: Իր բովանադակային իմաստարանական գործառույթով այն կարևոր տեղ է գրավում սիրավեպ դաստանների ընդհանուր կառույցում:

18-19-րդ դարների կովկասի ժողովուրդների ու նրանց կենցաղը նկարագրող փաստագրական նյութերում հաճախ են հիշատակվում հայտնի աշուղների ու նրանց հետ մրցելու նպատակով օտար և հեռու տեղերից ժամանած վարպետների անունները:

Արժանահիշատակ փաստերից է Իրանական Աղբբեջանից ժամանած աշուղի մրցույթը Սայաթ-Նովայի հետ, որի երգերում հանդիպում ենք դասական սիրավեպերի հանրահայտ հերոսների՝ Մեծնունի, Փարհապի, Դարիբի և այլոց անունները: Հայ իրականության մեջ գոյություն է ունեցել նաև աշուղների հեռակա բանավեճի ավանդույթ:

Առակի, Հանելուկի, երգ ու նվագի, նվագարանի լուս կամ խորհրդավոր ներկայության, մնջախաղի, գաղտնալեզվի և բազում այլ միջոցների օգնությամբ աշուղական մրցույթի տեսարանները պարուրվում են իմաստարանական քողով և բանավոր ավանդույթի արվեստի պայմաններում դառնում դիտելիքի պահպանման հուսալի շտեմարան: Խորհրդավոր - ծիսական և կրոնական դիտելիքի կիրառությունն արտասովոր արտահայտչականություն և ուժ է հաղորդում աշուղների խոսքին:

18-րդ դարի սկզբից, երբ աշխարհիկը հայ սկսեցիայում դառնում է գերիշխող, երբ բանաստեղծական պատկերները խարսխվում են ունալ իրականությունից բխող մարդկային հույզերի վրա, հայ աշուղության հետազա վարդացման ընթացքը

ուղենչեց Հովհաթանյան Նաղաշների նահապետը՝ մեծ Հովհաթանը:

Բանաստեղծ ու երաժիշտ, երգիչ ու նկարիչ, կենսուրախ մարդ, խաղերի ու տաղերի մեծագույն մասի նյութը՝ կինն ու գինին, քեզն ու ուրախությունը, խոշոր մի դեմք, որը հանդես է գալիս այն ժամանակամիջոցին, երբ մի կողմից արդեն դադար էին առնում մեր միջնադարյան տաղերգուները և մյուս կողմից՝ հրապարակ էին գալիս աշուղները: Ճիշտ նույն զուգագիպությամբ Հովհաթան-նկարիչը հանդես է գալիս այն ժամանակ, երբ մի կողմից՝ դադար էր առնում մեր միջնադարյան մանրանկարչությունը և մյուս կողմից՝ սկիզբ առնում հաստոցային աշխարհիկ նկարչությունը: Նաղաշ Հովհաթանի զբական ժառանգությունը մեծ չէ, մինչև այժմ հայտնի խաղերի ու տաղերի թիվը 70-80-ից չի անցնում. բոլոր այդ երգերը զանազան տարբերակներով ցրված են ձեռադիր տաղարաններում: Կարեոր հարց է համարվում չպահպանված մեղեղիներով երգերի բանաստեղծական տեքստերում հաճախ նկատվող տարբեր ձևերի և չպիերի կրկնությունների իմաստը, որ հենց առաջին հայացքից ընկալվում է որպես մեղեղիական գործոնի հետ առնչվող երևույթ: Դեռ ավելին, այսպիսի կրկնությունները երբեմն հնարավորություն են տալիս ենթադրություններ անելու նրանց մեղեղիների հնարավոր կառուցվածքների կամ շարադրանքների մասին:

Աշխարհիկ մատծողության տեր Նաղաշ Հովհաթանը կարծես թե անմրցակից է իր հարուստ ոճային պատկերներով, իրերի և կենցաղի տեսարանների գեղանկարչական ընկալումներով:

1710-ական թվականներին Հովհաթանը գնում է Թիֆլիս և գառնում արևելյան երգ-երաժշտության սիրահար, Վախթանգ VI թագավորի արքունական երգիչ-երաժիշտն ու նկարիչը: Սիրո երգերի մեջ Հովհաթանը միգուցե միայն զիջում է Սայաթ-Նովային: Բայց նա ավելի ռեալ է մոտենում կյանքին և երևույթներին: Մինչ Սայաթ-Նովան իր բոլոր խաղերում փնտրում է ու կարծես չի գտնում իր միակ «սիրեկանին», Նաղաշը վայելում է կյանքը, վայելում է սերը լիառատ կերպով:

Օրինակ, մի այրի կնոջ նա ուղարկում է այսպիսի տողեր.

Համ է քո պարոն կենդանի չի,
Քեզ տեսնողն ո՞նց ամանչի,
Քանի քո սկսուրը տանը չի
Եկ այգանն, բեր սեղանն
Քեզ հետ խմի, խաղեր կանչի Հովնաթանն...

Նաղաշի նկարագարդումերից մեկի «Մեջլիս Վրաստանի պալատում» էջը իլյուստրացիա է «Տաղ ի վերայ Գուրջաստանայ գողալներին...» երգի, որ իր մելոդիկ բնույթով, բանաստեղծական կերպարայնությամբ և համեմատությունների ուժով ժամանակի երգային արվեստի լավագույն օրինակներից է:

Նաղաշ Հովնաթանի աղղեցությունը մեր գրականության մեջ երեսում է երկու բանաստեղծների վրա: Դրանցից առաջինն իր որդիին՝ Հակոբ Նաղաշն էր, որ նույնական թողել է բնույթով և արվեստով Հովնաթանի երգերին նման շուրջ 30 սիրո երգ, երկրորդն՝ աշուղ Սայաթ-Նովան: Հակոբ Նաղաշի գործերը, բացի իր հոր մահվան առիթով դրված ողբից մինչև այժմ տպագրված չեն և մնում են անտիպ՝ Վիեննայի Միխիթարյանների մոտ և Էջմիածնի Պետ. Մատենաղարանում դտնվող ձեռադրերի տաղարաններում:

Հովնաթանի կյանքի վերջին տարիներին Թիֆլիսում ջուլհակ Հարութինը գեռ 10-12 տարեկան մի մանուկ էր: Երբեկցին պատահեն՝ է նա Նաղաշին, լսեն՝ է նրա երգն ու նվագը. մենք այդ չգիտենք, բայց հայտնի է, որ Թիֆլիսում շատ են երգել Հովնաթանի երգերը: Ուսումով շատ պակաս, բայց իր բանաստեղծական տաղանդով օժտված Սայաթ-Նովան բնավ չի խուսափել իր նախորդող վարպետից բաղմաթիվ լեզվանական փոխառումներ անել: Գ. Լևոնյանը մի շարք համեմատական օրինակներ է բերել այդ մասին իր «Սայաթ-Նովա» աշխատության մեջ և ցույց տվել, թե ինչ չափով է մեծատաղանդ աշուղը կրել Հովնաթանի աղղեցությունը:

Ինքը՝ Սայաթ-Նովան, չի թաքցրել այդ հանգամանքը: Նաղաշի «Ուսուի կուղաս քաղցր բլբուլ» երգը այնքան է դուր եկել նրան, որ նա հակառակ Թիֆլիսի բարբառի, իր մի խաղը նույնպես սկսում է այդ տաղով, փոխելով միայն մի բառ «Ուսուի կուղաս, զարիր բլբուլ»: Հոչակամոր աշուղը, որն իր խաղերը

գրել է աշուղական չափերով և երգել պարսկական-արևելյան եղանակներով, իր մուխամմազներից մեկը՝ «Քանի վուր ջան իմ» (1757) հյուսել է Հովնաթանի մի խաղի չափով ու երգել նրա եղանակով: Իր դավթարում այս խաղի համար Սայաթ-Նովան ունի այսպիսի ծանոթություն. «Էսպես Արութինի ասած. «Թասիրն չինի, կարմիրն գինին» խաղի հանգում»: իսկ այդ խաղը նաղաշի «Նստիմք ի մեջիս» հայտնի «Տաղ ուրախությանն» է, որի յուրաքանչյուր տունը վերջանում է այս տողով. «Թասիրն չինի, կարմիրն գինի քեզ անուշ լինի» և որն ըստ երեսույթին թիֆլիսում երգվել է Սայաթ-Նովայի օրոք:

Սայաթ-Նովան հարթեց հայ հոգևոր և աշխարհիկ մասնագիտացված արվեստների միջև գոյացած անջրապետը: Նրա արվեստի հոգևոր պաթուը, հնչեղությունն ու հասարակական դերը այսօր էլ այնքան մեծ են, որ կարող են դիտվել որպես հոգևոր ուղու վերածննդի խորհրդանիշ:

20-րդ դարի երկրորդ կեսերից աշուղությունը սկսում է կորցնել երբեմնի հնչեղությունը, լսարանի համասնոությունն ու խանդավառությունը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է քաղաքային բնակչությանը: Աշուղական արվեստի ավանդական կենցաղավարման ու տարածման պայմանաձևերին՝ քաղաքային և գյուղական շրջիկ աշուղների ու պալատական երաժիշտների գործունեություն, մեջլիսային մրցույթներ, հովանավորչական սրճարաններ ու թևյարաններ, փոխարինում են էստրադային, փառատոնային, հեռուստատեսային և այլ համերգային բեմակարթականները: Նոր հայկական աշուղական դպրոցի ձեավորմանը զուղընթաց փոխվել է աշուղական երգերի թեմատիկան ու գերիշխող են դարձել աղքային-հայրենասիրական և սոցիալական մոտիվները:

Սակայն, անկախ աղքային ինքնության տիպարանության ընդհանուր դաշտում արվեստի տվյալ ճյուղի կենսունակությունից, մենք առանձնապես կարենորում ու իմաստավորում ենք աշուղական երգ-երաժշտության կատարողական ավանդույթի պահպանման և դիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Алис НЕРСИСЯН

Институт искусств НАН РА

АКОП ОВНАТАНЯН И АРМЯНСКИЙ ПОРТРЕТ ХХ ВЕКА: КОНЦЕПЦИЯ ЛИЧНОСТИ

Первый непредвзятый взгляд, брошенный с высоты наших дней сквозь весь ХХ век на искусство Акопа Овнатаняна не может обнаружить сколько либо убедительных параллелей между искусством Овнатаняна и армянской портретной живописью ХХ века. Наследие художника представляется нам художественным явлением, значение которого определяется и ограничивается историческими рамками его времени и места. Это дает нам основание считать, что художники ХХ века не оглядывались на Овнатаняна в процессе самопознания и самоопределения, в поисках ориентиров, в поисках жизнестойкой национальной традиции. И все же произведения Овнатаняна, поставленные в один ряд с лучшими образцами армянской портретной живописи ХХ века, обнаруживают известное сходство (а часто тождество) с ними и на мировоззренческом, и на изобразительном уровне. Речь идет не о непрерывной и поступательной линии развития, а о глубинной близости разнородных явлений, истоки которой следует искать не в преемственности традиций, а в особенностях национального мировосприятия. В рамках данного выступления мы будем говорить о концепции личности в портретном творчестве Акопа Овнатаняна и в армянской портретной живописи ХХ века.

В портрете, как известно, можно говорить обо всем, начиная с личности модели, личности художника и кончая ценностными критериями эпохи.

Овнатанян писал портреты представителей состоятельного сословия. Ему было что сказать о своих заказчиках, об их имущественном статусе и положении в обществе, о роде их занятий, об историческом, социальном, семейном фоне, на котором протекала их жизнь, об окружающем мире и их взаимодействии с ним. Но все, что художник видел сам и хотел рассказать другим, было заключено в лице его моделей.

Человек на портрете Овнатанияна существует вне времени и места, *вне обстоятельств*. И это несмотря на педантическую, почти этнографическую точность в передаче деталей одежды, тараза — то есть того, что безошибочно соотносит человека с временем и местом и определяет инишу, которую он в них занимает. Портреты художника центричны и статичны. Их пластическая, ритмическая и живописная организация плавно ведет зрителя к единственно важному для художника в портрете, к его смысловой доминанте — лицу модели. Специфические головные уборы женщин, узоры их кружев и драгоценностей, их узкое декольте, обнаженные кисти рук и открытые шеи, мужские костюмы с особыенным "историко-социальным" покроем, шейные платки и бабочки — это декоративный фон, фрагменты пьедестала, на который возведено лицо — на полотнах художника живет одно только лицо. Это самое светлое пятно на портрете: оно выделено светом живописи, но оно выделено и светом внутренней жизни модели. По контрасту с неподвижными, как бы окаменевшими в одной позе "бездыханными" телами лица на портретах Овнатанияна полны жизни и внутренней динамики, в их внешние бесстрастных чертах читаются и движение мысли, и порыв чувств, и внутреннее напряжение. Залигтый ровным светом и как бы "обнаженный" овал лица — это вход в глубину личности, характера, внутреннего мира человека, его психологического и духовного склада. Нонна Степанян главным в творчестве Овнатанияна считала "открытие человека"¹. Позволим себе небольшое уточнение: главным в творчестве Овнатанияна было открытие личности в человеке. Именно это позволило искусству Овнатанияна выйти из средневековья и шагнуть в новое время.

В жанровой иерархии армянской живописи XX века портрет анндирует вместе с пейзажем или следует сразу за этим признанным избраником национальной живописи. К портрету обращались почти все армянские художники вне зависимости от масштаба дарования, жанрового или тематического выбора, стилистических предпочтений, но только один мастер — Мартирос Сарьян — создал концепцию портрета, и мало кому из армянских живописцев XX века удалось противопоставить ей нечто иное и равнозначное. В истории

¹ Нонна Степанян. Искусство Армении. Черты историко-художественного развития. М., Советский художник, 1989, с. 145.

армянской живописи после Овнатаняна и до Сарьяна работали художники, некоторые из них оставили заметный след в национальном искусстве, но никто из них не смог подняться до создания концепции портрета.

Портреты Сарьяна, написанные им на протяжении нескольких десятилетий, вписываются в единую мировоззренческую и изобразительную модель: художник воспевает творческую, созидательную личность, мощь ее темперамента, победительную силу ее молодости, внутренней и внешней красоты, воплощая обобщающую идею портретного образа исключительно в лице своей модели. Декларативный пафос Сарьяна не приемлет никаких иных ассоциаций, кроме тех, что соотносят личность с землей, страной и народом. Чем выразительнее и убедительнее конкретный портретный образ, тем выше и явственнее встает за ним образ Армении.

И современники Сарьяна, и живописцы нескольких последующих поколений приняли сарьяновскую изобразительную модель портретного образа как национальную традицию и наполнили ее собственным содержанием. Портрет мог быть исполнен психологической глубины или декоративного блеска, он мог быть дотошным описанием внешности человека или служить формальной основой для изысканной живописи, он мог быть зеркалом, в котором в едином отражении скрещивались личность художника и личность модели. Неизменным оставалось одно: основой портретного образа служило лицо модели — лицо как пластический феномен, лицо как пластический выразитель национального типа, национального характера, выразитель творческой энергии, внутренних душевых и духовных побуждений, трагического или жизнеутверждающего миоощущения, как синтетический выразитель личностного начала в человеке. Модель интересовала армянского художника как "личность в себе", лицо как предмет изображения во всей совокупности его неповторимых черт наилучшим образом характеризовало личность, позволяло проникнуть в ее тайну, приблизиться к постижению ее непостижимости, и все прочие, внеличностные жизненные обстоятельства и ассоциации, связывающие человека с внешним миром, оставались, как правило, вне пределов портретного образа.

Так работал в портрете Сарьян, так работали в портрете не только прямые последователи Сарьяна Мгер Абегян, Мариам Асламазян и Ерануй Асламазян, но и столь непохожие друг на друга Ару-

тион Каленц, Оганес Зардарян, Ара Бекарян, Оганес Минасян, Минас Аветисян, Лавиния Бажбеук-Меликян, Вруйр Галстян, Ашот Оганесян, Эдуард Харазян, Роберт Элибекян, Генрих Элибекян, Эдуард Аризруян, Александр Григорян, Анатолий Папян, Сейран Хатламаджян, Варужан Вартанян и многие другие живописцы. Даже самый значительный портрет Ерванда Kochara, его автопортрет 1936 года (и не только он), даже портреты Геворга Григоряна (Джотто) (и не только собственно портреты) вполне вписываются в эту традиционную модель. Нам представляется, что в тех портретах Мартироса Сарьяна, Ерануи Асламазян, Оганеса Зардаряна, Минаса Аветисяна, Лавинии Бажбеук-Меликян, Анатолия Папяна, Саркиса Мурадяна, в которых активный смысловой фон соперничает с изображением лица, все композиционные, живописно-пластические и смысловые нити сходятся тем не менее к лицу модели².

Если мысленно представить портретную галерею Сарьяна, а вслед за ней — галерею из лучших произведений портретного жанра армянской живописи XX века, перед зрителем развернется разнообразный "ландшафт" армянских лиц, а через них и армянских характеров, армянского темперамента, армянского мироощущения. Перед ним встанет Армения в лицах. Здесь каждый портретный образ, взятый в отдельности, кажется — и является — изображением конкретного, единственного человека, и он же в общем ряду всех остальных портретов выявляет известную и немалую степень обобщенности. Эта галерея будет похожа на древо армянского рода: соки, питающие мощный ствол, растекаются по веткам и стекают в


² Этот список не может быть дополнен именами только двух живописцев — Александра Бажбеук-Меликяна и Акопа Ананикяна. В портретах Бажбеук-Меликяна — а он пишет преимущественно женские портреты — пламя мужского восторга перед явлением женщины пересиливает интерес художника к женщине как к личности, и его портреты это скорее живописное воплощение трепета желания, чем изображение человека или размышления о своеобразии личности. Образный мир Акопа Ананикяна столь целен и синтетичен, что не может быть расченен на портрет или жанровую картину, и когда художник пишет конкретного сапожника, его кисть создает обобщенный образ всех сапожников, всех мастеровых его городка, в перед мысленным взором зрителя возникает не только сам сапожник, но и атмосфера, запахи и звуки его мастерской, его улицы, заднего двора, дома, кухни и очага, а за ними встают образы всех чад и домочадцев.

каждый отдельный плод, и индивидуальное в каждом лице проявляется как грань общего. Открывают эту галерею не произведения Сарьяна, а портреты Акопа Овнатаняна. Это в его портретах впервые индивидуальное прорвалось сквозь оцепенелость безжизненных черт живостью общего выражения и жизненностью образа. Это в его творчестве впервые все эти разнообразные лица не распались на отдельные портреты, а образовали нечто цельное, единое, что можно условно определить словом: "армяне".


Сугубый интерес Овнатаняна к личности в человеке был его открытием и тем стержнем его творчества, который мог стать наследием и не стал им. Он заново воскрес в XX веке в творчестве лучших армянских живописцев не как возрожденная традиция, а как особенность их собственного мировоззрения. И только наше восприятие ставит их в один ряд как явления одного порядка.

ՆԿԱՐՆԵՐ


ИЛЛЮСТРАЦИИ



1. Հակոբ Հովհաննեսիան, Առաջաձատուր Սարգսյանի դիմանկարը, 1834



2. Համբոր Հովհաննեսյան, Նատալիա Բենումյանի դիմանկարը (Հասոված)



Յ. Հակոբ Հովհնաթանյան, Մելիքովի դիմանկարը




4. Հռվինաթան Հռվինաթանյան, Աստվածամայրը Մանեկան հետ



5. Անհայտ Նկարիչ (XVIII դար), Աստվածամայրը Մանկան, Սր. Գրիգոր
Լուսավորչի և Սր. Ստեփանոսի Հետ



6. Անհայտ նկարիչ (XIX դար), Ազնվական տղամարդու դիմանկարը



7. Անհայտ նկարիչ (XIX դար), *Ազգիտակ սրով անհայտ տղամարդու դիմանելաբը*



8. Անհայտ նկարիչ (XIX դար), Երիտասարդության ճերմակ վերնաշապիկով
(Գրիգոր Թումանյանի դիմանկարը)

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ**

**ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ
(5-8)**

**ХАЧАТРИЯН - ПОЛАДЯН Нелли
О ХУДОЖЕСТВЕННОЙ СИСТЕМЕ АКОПА
ОВНАТАНЯНА
(9-26)**

**ԱՎԵՏԻՍՅԱՆ Քնարիկ
17-18-րդ ԴԱՐԵՐԻ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՄՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՌԱՆՉԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(27-36)**

**ՀԱԿՈԲՅԱՆ Զարուհի
ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
ՀԱԿՈԲ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ
(37-42)**

**ԹԱԶԱՐՅԱՆ Իվեթ
ԴԱԶԱՐ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ
(43-49)**

**ՔՈԹԱՆԶՅԱՆ Գարեգին
ՀԱԿՈԲ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԵՐԿՈՒ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒՄՈՒԹՅՈՒՆ
(50-55)**

*ԵՐԻԶԱԿՅԱՆ Լիլիթ, ՊԵՏՐՈՎԱՅԻ Արուելյակ
ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ԱՎԱՆԴՈՒՅԹԻՆԵՐԸ
(56-61)*

*НЕРСИСЯН Алис
АКОП ОВНАТАНЯН
И АРМЯНСКИЙ ПОРТРЕТ XX ВЕКА: КОНЦЕПЦИЯ
ЛИЧНОСТИ
(62-66)*

ՀԱԿՈԲ ՀՈՎՆԱԹԱՆՑԱՆ

ԱՆՑՈՒՄ ՄԻԶՆԱԴՐԻՑ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հրատարակիչ-տնօրին՝

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ

Հրատ. խմբագիրներ՝

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱԼԻՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համակարգչ. ձեռակորումը՝

ՆԱՐԻՆԵ ԿԱՐԱԳՈՒՅԱՆԻ

Հայաստանի Ազգային պատկերասրահի տպարան

0010 Երևան, Աբամի 1

Հեռ. 58 27 03